22
Կ-46

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ր. ԱԽԵՖՄԱՆԻ

ՍՏՈՒԳՎԱԾ Է 1961 Թ.

ԺՈՂՈՎՈՒՐԴԻ

ԵՒ

ԵՐԿՍԵՌ — ԳԳԻՐՈՅՆԵՐԻ ՄԱՆՈՒԿՆԵՐԻ

ՀՈԳԵՒՈՐ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹԵԱՆ ՀԱՄԱՐ

ԳՐԵՑ

ՍԱՐԳԻՍ ԱՒԱԳ-ՔԱՀԱՆԱՑ ԱՂԱՔԱՆԵԱՆ

ՎԱՂԱՐՇԱՊԱՏ

Ի ՏՊԵՐԱՆԻ ՍՐԲՈՅ ԿԵԹՈՂԻԿԷ ԷՋՄԻԱԾՆԻ

ՌՅԼԸ—1890

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ԳՐԱԴԱՐԱՆ

ՀՐԱՄԱՆԱՒ

ՏԵԱՌՆ ՏԵԱՌՆ ՄԱԿԱՐԱՅ

ՎԵՀԱՓԱՌ ԵՒ ՍՐԲԱԶՆԱԳՈՅՆ

ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ.

A 1/895

Ի ՅԻՇԱՏԱԿ

Հանգուցեալ յանմահութեան Անանայի Սողոմոնեանի Զուրաբեանց ծնեալ Քեթխուդեանի

կանգնէ

Զայս գրակերտ մահարձանի առուսին իւր Ճարտարապետ

Ներկողայոս Սիմէոնեանի Զուրաբեանց:

«Այս են յաւիտենական կեանք. զի ծանիցեն զքեզ միայն ճշմարիտ Աստուած՝ և զոր առաքեցեր զՅիսուս Քրիստոս»։ Յով. Գլ. ԺԷ. 3։

«Հաւատացէք՝ ի լոյսն զի որդիք լուսոյ եղիջիք»։ Յով. Գլ. ԺԲ. 36։

ՄԱՀԱՐՁԱՇ

†

ԱՆՆԱՅԻ ՍՈՂՈՄՈՆԵԱՆ
ԶՈՒՐԱԲԵԹԱՆՑ

Ծնեալ ի տոհմէ Քեմխուդեանց

1861—1888

ՑԱՌԱՋԱԲԱՆ

Տալիս եմ քեզ մի գրքոյկ, որ աւելի մարդու հոգւոյ և մտքի հետ է խօսում, այն գրքոյկն է «Ա-է-բ-ան», որոյ հեղինակն է Յիսուս Քրիստոս, և որի լեզուից և շրթունքից շնորհք և սէր է բղխում, և իւր խօսքերը բոլոր աշխարհ է գրաւում, և մարդուս հոգին հրաւիրում է դէպի գերագոյն սէրը և երկրիցս երկինք է բարձրացնում։ Ո՞րն է այն մեղմախօս բարբառն, որ Հրէաստանի խորքերից տիեզերքի չորս կողմը հասաւ։ Ի՞նչ զօրաւոր լեզու էր այն, որ ընտրեալ յիմարների բերանով աշխարհիս իմաստուններին մտքերը յաղթահարեց ու նուաճեց։

«Ա-է-բ-ան» յաւիտենական կենաց բանն, Յիսուս կտակ թողեց աշխարհիս ու գնաց։ Իսկ Ս. Հոգին յիշեցրուց։ Ուսուցանիչները գրե-

ցին և Առաքեալները քարոզեցին։

Աւետարանը Յիսուսի շունչն է, որով չէ թէ միայն բարիլոնի գաշտի մէջ ցրուած Հրէական ազգի չորացած ոսկորները կենդանացրուց, այլ համայն աշխարհիս երեսին սփռուած կենդանի, բայց մեռած ընդհանուր մարդկութիւնն հոգիները, նոր կեանքով վերանորոգեց։

Ինչ որ Աւետարանը գործեց, չը կարողացան գործել հին և նոր աշխարհի մէջ ոչ իշխանութեանց զէնքերը և ոչ իմաստասէրների գիտերը։ Աւետարանի փառքը բարձրացաւ, տիրեց աշխարհիս վրայ, մի քանի տկար ձկնորսների ձեռքով։ Աւետարանի փառաւոր գահը բէթղէհէմի մսուրը և աղքատների խրճիթներն էին։

Բնաւ մի այնպիսի գիրք չըկայ և ոչ էլ մարդկային հանճար և իմաստութիւն, որ կարողանայ մարդկանց հոգին ուղղէ, դաստիարակէ, բարւոքէ և ի բարին վերածէ, բացի Աւետարանն, որ աշխարհ կարդաց և հասկացաւ։ Նրա մանրիկ՝ մանանեխի սերմերից մի ծառ բուսաւ, որի ապաստանարար ճուղերի վրայ աշխարհիս վաստակած և բեռնաւոր մարդիկ թռչունի նը-

ման նստեցան և հանգստացան։

Յիսուս, իր Աւետարանի պատուական գանձը՝ հրեաստանից սկսեց բաշխել ամենին, և ձրի էր բաշխում, ոչինչ չէր պահանջում. այլ միայն հաւատք, ով կըհաւատայ, նա միայն կստանայ անգին գանձը, կամէր Տէրը՝ Աւետարանիս կերակուրը անմահարար է։ Դաւիթ կանխաւ զգաց և ճաշակից հոգւով և նրա քաղցրութիւնից զմայլեցաւ, ասելով «Որդէ՝ ՀԻ ԽՐԱՏ ԵՆ Ի ԽՄԱ ԻՄ ԲԱՆԻ ԽՈ, ԽՈՆ ՀՄԵՏՐ ԲԷՐՈՆՈՅ ԻՄՈՅ»։

Այս ամենաքաղցր սիրոյ ճաշակը Յիսուս երկնքից բերեց, և իր Ս. Աւետարանի օրէնքները՝ կարմիր արիւնով գրոշմեց գողգոթայի վերայ, որոնցից չէր կարողացան ջնջել և ոչ նշանախեց մի՝ աշխարհիս բռնաւորների ձեռքերը։ Ի՞նչ կարողացան շինել Պղատոնը, Արիստոտէլը, Սոկրատը՝ իրանց իմաստասիրութեամբ, բայց Յիսուս շինեց կրօնի սուրբ մեղր, որով քաղցրացաւ բոլոր մարդկութեան բերանը, որ դառնացած էր Ադամայ ճաշակից պտղովը։

Աւետարանը՝ լուսատու ճրագ է։ Եկեղե-

ցին մուտն է, եթէ սրա լոյսով չը լուսաւորուի. եկեղեցին կը շեղուի իւր ուղիղ ճանապարհից, եթէ սրա լոյսը չառաջնորդէ. եկեղեցու հիմը հաստատ չէ, եթէ սրա սուրբ քարերով չը հիմնուին, որի անկեան գլխաքարը Քրիստոս Յիսուսն է։

Հայաստանեաց Եկեղեցւոյ երանելի նախահայրերն ամենայն երկիւղածութեամբ պաշտեցին Աւետարանը, նրանցից մի քանիսը մեկնութեամբ պարապելով, աւետարանի գիտութիւնը քրիստոնեայ աշխարհին ընտելացրին։ Եթէ ապացոյց ես կամենում, գնա շրջիր Հայաստանի վանքերն, քաղաքներն ու գիւղերն, որոնց մէջ՝ կը գտնես բիւրաւոր գրչագիր աւետարաններ և նրանց մեկնութիւնները մագաղաթների վրայ վայելուչ ծաղկեայ նկարներով գրուած։ Եւ այսօր իսկ եկեղեցւոյ մէջ ամէն ընթերցուածներից աւելի աւետարանն է պաշտվում. որովհետև հաւատացեալների խնկելի գիրքը աւետարանն է, որ համբուրում է յաճախ ամենայն ջերմեռանդութեամբ։ Եթէ հաւատացեալ մինը հիւանդանում է, աւետարանին է դիմում, եթէ նրա գլուխը ցաւում է, նրա

տակն է գնում, և նիթէ ուղիղ սրտով և առանց երկմտելու հաւատում է. կատարելապէս իւր գաւերը փարատում են։ Պէտպէս ցաւերի վրէ-ին և դրկանքների հաղթիչող անձինք ևս նիթէ մնտենում են սրան, իրանց միութիւնն ու սիրտանքը սրա մէջն են գտնում. ոչ միայն մարմնոյ ախտերն է բժշկում, այլ՝ ևս առաւել հոգոյ ախտերը իսպառ սրբում է։

Ես ևս, որ յետին պաշտօնեայս կոչուած եմ աւետարանի սուրբ սեղանին սպասաւոր, այն ամենայի անսպառ սեղանից՝ մի պատառ ճաշակ պատրաստեցի Սիօնի որդւոց համար, իմ տկար մտացս չափով, և գրեցի այս փոքրիկ գրքոյկը։ «Բ-վ-ա-ն-դ-ւ-թ-ի-ն Ս. Ա-ւ-ետ-ր-ա-ն» անուն տալով. այն նպատակով, որ կարողանամ Ս. աւետարանի ճշմարտութեան բարոյական և փրկաւէտ Յիսուսապիր օրէնքները գոնէ համառօտ մատչելի անել բոլոր հաւատացեալներին, որ փոխանակ քաղաքային գատաստանական բազմահատոր օրինագրքերի՝ այս փոքրիկ մատենիկը պահուի իւրաքանչիւրի ծոցում, և սրա սուրբ օրինաց խօսքերն Յիսուսի քարոզած սիրոյ պատուիրանքների

հետ դրոշմուի ամենքիս սրտի մէջ, որով մենք էլ մեր երկնաւոր Հօր որդեգրութեան և Ս. աւետարանի ժառանգ կոչուելու արժանի լինինք, որին նա արժանացրուց մեզ սուրբ Հոգւոյ վերածնութեան շնորհիւ։

Նոչատա Պաշտոնեայ

ՍԱՐԳԻՍ Ա. ՔԱՀԱՆԱՑ ԱՂԱՋԱՆԵԱՆ

ՆԱԽԵՐԳԱՆՔ

Զորս աւետարանիչների վրայ մեր Ս. Հայրերից շատերը այսպիսի մեկնութիւններ են տալիս թէ, մեզ համար մարդացած Աստուած փրկիչը չորս տեսակ կատարելութիւններ ունի որը Եզէկիել մարգարէին յայտնուեցաւ (Եզէկ. Ա. գլ.)։ Ե— էն— մարդացեալ Աբրահամն, Հաշտարար և Ատրամաշայն Տէր։

Այս հիման վրայ Ս. Հայրերն ամէն մի աւետարանչի պատմութեան սկզբնաւորութեան եղանակի համաձայն, իւրաքանչիւր աւետարանի սկսելուց յառաջ մի մի առակաւոր պատկեր են յարմարացրած։

Մատթէոսինը՝ մարդ, որ իւր աւե-

տարանը Քրիստոսի մարմնաւոր ծնողների ազգահամարից սկսեց գրել։

Մարկոսինը՝ առիւծ, որ առիւծաբար սկսեց հնչեցնել իւր աւետարանը, Յովհաննու ապաշխարութեան և մկրտութեան զօրաւոր քարոզութիւնից

Ղուկասինը՝ երինջ, որ իւր Աւետարանը Զաքարիայի քահանայական պաշտօն կատարելուց սկսեց գրել։

Յովհաննէսինը՝ արծիւ, որ սա էս իւր աւետարանը Յիսուսի բարձրաթռիչ քարոզութիւնից, այնէ նրա լաւիտենական Աստուածութիւնից ըսկսեց ճառել։

Յիսուս Քրիստոս այս բոլոր կատարելութիւններն լրացրուց աշխարհիս վրայ, ինքը իւր անձովը օրինակ ցոյց տուեց։ Նա սիրեց երեխային, երիտասարդին, ծերին, կինարմատին, ազգա-

տին, Հարուստին, զինուորականին, քահանային, տէրին, ծառային, բոնաւորին, ստրուկին, մեղաւորին, մաքսաւորին, գողին, պոռնկին, հիւանդին, անդամնալուծին, հեթանոսին, մէկ խօսքով ամէն կարգի մարդկանց, ծնաւ իբրև մարդ անարատ կուսից, երեսուն և երեք տարի շրջեց աշխարհի վերայ, ապա անարգաբար խաչուեցաւ. մեռաւ իշխանաբար և թաղեցաւ, երրորդ օրը Աստուածապէս յարեաւ և քառասներորդ օրը փառքով երկինք Համբարձաւ, Հօր աջկողմ բազմեցաւ և աշխարհիս վերջը կրկին գալու է նոյն փառքով, դատելու կենդան և մեռած արդար և մեղաւոր մարդկանցը, իւրաքանչիւրին իւր վարձն հատուցանելու համար։

«Այլ թէ մեք կամ հրեշտակ յերկնից աւետարանեսցէ ձեզ աւելի քան զոր աւետարանեցաքն, նզովեալ լիցի»։ Պօղոս առա.
Ա. գաղ. Ա. գլ. 8. համ.

ՀԱՅՐԱՊԱՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՄԱՏԹԷՈՍԻ Ս. ԱՒԵՏԱՐԱՆԻ

Ս. Մատթէոս Տիրոջ աշակերտը, (զևի ալփիոյ) առաքեալ-աւետարանիչը, գրեց իւր Աւետարանը Եբրայեցիներէն, Երուսաղէմ քաղաքում, Ս. Հոգւոյ ազդմամբ՝ Քրիստոսի երկինք համբառնալու ութերորդ տարին, հրէայ հաւատացեալների համար։

Սա նկարագրեց Յիսուսի ըստ մարմնոյ ծնունդը դաւթի ցեղից, ազգաթուելով Աբրահամից մինչի մարիամ կոյսը, մկրտութիւնը Յովհաննէսից, փորձութիւնը սատանայից։ Հրաշագործութիւնները, աշակերտաց ընտրութիւնը, ինն երանութիւն տալը, աշխարհիս վերջը լինելու բաները, Փրկչի ահաւոր դալուստը, դատաստանը, և իւրաքանչիւրի հա-

տուցումը, կենարար մարմնոյ և արեան Ցեսուն հաղորդութեան խորհուրդը, մատնութիւնը. Աննայի և Պիղատոսի առաջ դատապարտուիլը, մարմնով խաչուիլը, նրա հանդերձները զինուորների մէջ բաժանուիլը, գերեզմանի մէջ դրուիլը, երեք օրից յարութիւն առնելը, իւր աշակերտաց երևալը, նրանց պատուիրելը՝ աշակերտել ամեն հեթանոսներին և մկրտել նրանց, և աշակերտների մօտ մնալ խոստանալը մինչի աշխարհիս վերջը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՄԱՏԹԷՈՍԻ ԳԼԽ Ա.

Քրիստոսի ազգահամարը, յղութիւնը
ծնունդեանը և ծնողը

Սարդացեալ Աստուծոյ Որդւոյ Յիսուսի փրկչի ազգահամարն։ Աբրահամից մինչի Դաւիթ։ Դաւթից մինչի Բաբելացւոց գերութիւնը։ Բաբելացւոց գերութիւնից մինչի Քրիստոս։ քառասուն երկու ազգագիծ շարաւիղ։

Յովսէփ կոչ մարիամի հետ նշան-

ուած էր, մարիամ Հրեշտակի աւետմամբ, Ս. Հոգուց յղացաւ, մարիամի մասին Յովսէփի ունեցած սխալ կարծիքը՝ Հրեշտակ փարատեց, տեսլեան մէջ երևալով և Ս. կոյս մարիամից ծնելոյն անունը Յիսուս որէ Քրիստոս անուանել պատուիրեց։

Բ։

Քրիստոսի յայտնութիւնը, մանկութիւնը և ջրբաստութիւնը։

Յիսուսի ծննդեան ժամանակ արևելքում երևաց մի անսովոր աստղ որ տեսնելով մոգերը եկան (*) Երուսաղէմ, և այն տեղից գնացին բէթղեհէմ երկրպագութիւն տալու Աստուած

(*) Մոգերը երեք էին, գիտուն և աստղաբաշխութեան տեղեակ մարդիկ։

որդի Յիսուս Քրիստոսին։

Հերովդէս երբ իմացաւ մոգերից նոր թագաւորի ծնուիլը, հանգստութիւն կորցրուց, կասկածելով՝ որ չլի՞նի թէ զօրանայ մանուկը և խլէ իւր թագաւորութիւնը, հրամայեց կոտորել բեղդեհեմի երեխաներին երկու տարեկանից փոքր լինողներին, կարծելով թէ Յիսուսն էլ նրանց հետ կ՝սպանուի, սակայն Յովսէփ, հրեշտակի խօսքով, վերառաւ մարիամին և մանկանը, փախաւ Եգիպտոս, ուր մնաց մինչի Հերովդէսի մահը, և յետոյ դարձաւ գալիլեայ և բնակեցաւ Նազարէթ քաղաքում, Յիսուս զարգանում էր իմաստութեամբ և Աստուծոյ շնորհքով։

Հին աւանդութիւնը սրանց համար ասում է թէ՝ երեքն էս թագաւորական սերունդ, էին նրա համար էլ սովորաբար երեք թագաւորներ են կոչվում։

Գ

Քրիստոսի Հրամանները Յովհաննէսից։

Յովհաննէս խստակրօն վարք ունէր և բնակվում էր անապատում։ Սա սկսեց իւր քարոզութիւնը Յորդանանի եզերքում, քարոզում էր թէ Քրիստոս Աստուծոյ գառը՝ աշխարհ է եկել մեղքեր վերցնելու, նա մկրտում էր իւր մօտ եկող ապաշխարողներին, յանդիմանում էր փարիսեցւոց։

Յիսուս էլ երեսուն տարեկան մկրտուեցաւ Յովհաննէսից Յորդանան գետում։ Այդ ժամանակ բացուեցաւ երկինքը, Սուրբ Հոգին աղաւնու կերպարանքով իջաւ երկնքից նրա վրայ,

և Հայքն Աստուած վիրայեց վերևից։ «Դուք իմ սիրելի որդիքս որքան ես հաճեցայ։» Սրանով լայտնուեցաւ Երրորդութեան ծածկուած խորհուրդը։

Դ.

Քրիստոսի Փաչխուելիանը և Քառասնօրեան ակնկալը։

Յիսուս մկրտուելուց յետոյ, գնաց անապատ՝ սատանայից փորձուելու, ուր մնաց նա ծոմ, քառասուն օր ու գիշեր, և յետոյ քաղցեցաւ։ սատանան աշխատում էր զանազան հնարքներով խափել նրան, ցոյց տուեց քարեր որ հաց շինէ, կանգնեցրուց քաղաքի աշտարակի վրայ, որ իրան ցած գցէ, տարաւ սարի գլուխը, ցոյց

տուեց աշխարհիս թագաւորութիւնը և խոստացաւ տալ նրան՝ եթէ երկրպագութիւն կըտայ իրան։ բայց ամէն բանի մէջ՝ փորձողը խայտառակուեցաւ, և ապա հրեշտակները մօտ եկան ու պաշտում էին Յիսուսին։

Յիսուս թողեց անապատը, եկաւ Կափառնայում, բնակուեցաւ այնտեղ սկսեց իւր քարոզութիւնը։ Պետրոսին և Անդրէասին, Յակոբոսին և Յովհաննէսին կանչեց իրա մօտ և շատ հիւանդներ բժշկեց։

Ե.

Քրիստոսի խաչելը Երուսաղեմ։
Երանելի՜նը. և օրինաց մէջը։

Յիսուս իւր քարոզութիւնը սկսեց լերան վրայ։ և յայտնեց թէ՝ որոնք են երանելիները։ Եւ ինն երանութիւն տուաւ։

1. Հոգւով աղքատներին.
2. սգաւորներին.
3. հեզահոգիներին.
4. արդարութեան համար քաղցեալ և ծարաւիներին.
5. ողորմածներին.
6. սուրբ սիրտ ունեցողներին.
7. խաղաղարարներին.

8. արդարութեան համար հալածուածներին.

և 9. ի զուր տեղը նախատուածներին.

Իւր աշակերտներին՝ երկրի աղ, աշխարհիս լոյս, վերան վրայ կացած քաղաք անուանեց։

Եւ յայտնեց թէ ինքը չէ եկել օրէնքներ քանդելու այլ թերին լցնելու. բացատրեց թէ ինչ է սպանութիւն, շնութիւն, և երդուած անելը։ Զորդորեց չարին հակառակ չը կենար, մինչև անգամ թշնամին սիրել, և ամէն ջանք ի գործ դնել կատարեալ լինելու համար։

Զ.

Աստուածպաշտութիւն, ողորմութիւն, աղօթք և պահք։

Յիսուս իւր քարոզութիւնը շարունակեց լերան վերայ, և խօսեց ողորմութիւն տալու, և աղօթք անելու վրայ, սովորեցրուց իւր աշակերտներին Տէրունական աղօթքը, «Հայր մեր»ը, յորդորեց որ՝ մեր եղբայրների յանցանքները ներենք, ծոմ պահենք, մեր գանձը երկնքում ժողովենք. Աստուծոյ և մամոնայի ծառայութիւն անելը միանգամայն, անկարելի համարեց։

Եւ յորդորեց որ աշխարհային բանե-

ըի համար հոգս չանենք, այլ միայն Աստուծոյ արքայութիւնը և նորա արդարութիւնը խնդրենք։

Է.

Քրիստոսի պատուէրները. Ը պատիւ.
ազնիւ անել, սուտ մարգարէներից
զգուշանալ։ Լիմի վրայ դուռն շինել։

Յիսուս իւր քարոզութիւնը վերջացնելով յանդիմանեց անխոհեմաբար դատողութիւն անողներին։

Յորդորեց ազօթք անել, սուտ մարգարէներից զգուշ մնալ, իւր խօսքին միայն լսողներ չլինել՝ այլ և կատարողներ, նմանիլ այնպիսի մարդկանց որ

իրանց տունը վէմի վրայ են շինում և ոչ թէ աւազի վրայ։

Ը.

Քրիստոսի հրաշքները.

Յիսուս բորոտին մաքրեց, հաբիւրապետի ծառային, Պետրոսի զոքանչին, և ուրիշ շատ հիւանդներ բժշկեց. ցոյց տուեց թէ ինչ կերպով իրան հետևիլ պէտք է։

Ծովի ալէկոծութիւնը հանդարտեցրուց, երկու դիւահարներից դեւերը հանեց, և դեւերի խնդրելովը նրանց թոյլ տուեց որ գնան խոզերի մէջ մտնեն։

Թ.

Քրիստոսի Մատթէոսին կանչելը և հրաշագործութիւնները։

Յիսուս անդամնալուծին բժշկեց, Մատթէոսին մաքսաւորութիւն անելուց հեռացրուց և իւր մօտ կանչեց նրան, մաքսաւորներ և մեղաւորների հետ կերաւ ու խմեց։

Տեռատես կինը բժշկեց, Յայրոսի աղջիկը կենդանացրուց, երկու կուրերի աչքերը բացեց, համր դիւահարը բժշկեց, և բազմութեան վրայ խղճաց անձնագիր հովիւներ չունենալու պատճառով։

Ժ.

Քրիստոսի փառն էրկու աշակերտները և նրանց փառաց պատուէրները։

Յիսուս իւր առաքելոց աշակերտներին իւր ծօտ կայեց որք են՝

1 Սիմոն-Պետրոս։
2 Անդրէաս նրա եղբայրը։
3 Յակոբոս մեծ-Զեբեդեայի որդին
4 Յովհաննէս նրա եղբայրը։
5 Փիլիպպոս։
6 Բարդուղիմէոս։
7 Թովմաս։
8 Մատթէոս։
9 Յակոբոս փոքր-Ալփիան։

10 Թադէոս-Ղէբէոս կամ Յուդայ
(ոչ Իսկարիովտացի)
11 Սիմոն կանանացի.
12 Յուդայ Իսկարիովտացի.

Եւ նրանց ուղարկեց Իսրայէլի տան կորած ոչխարների մօտ, հրաշքներ անելու իշխանութիւն և պատուէրներ տուեց նրանց, որ ուսուցանեն ամենքին մարդոյ առ Աստուած ունեցած պարտականութիւնը, մխիթարեց նրանց հալածանքների համար, և օրհնութիւններ խոստացաւ նրանց ընդունողներին։

ԺԱ.

Քրիստոսի մօտ ուղարկելը Յովհաննէսի՝ է՞ր էլն՝ աշակերտներին։

Յովհաննէս իւր աշակերտներին Յիսուսի մօտ ուղարկեց։ Յիսուս բարի վկայութիւն տուեց Յովհաննէսի համար, և կանանց ծննդոց մէջ նրան ամենից մեծ անուանեց, ժողովրդեան սխալ կարծիքը Յովհաննէսի և իւր համար բացատրեց։

Քրիստոսնախատեց Քորազին։ Բեթսայիդա և կապառնայում քաղաքները, իրանց ապերախտութեան ու անգեղջ մնալու համար, և փառաւորեց իւր Հօր խմաստութիւնը։ Աւետա-

բանը պարգամիտներին յայտնելու համար. դէպի իրան կանչեց նրանց ամենքին, որոնք զգում էին իրանց մեղքի ծանրութիւնը։

ԺԲ.

Քրիստոսի յանդիմանական պատասխանը փարիսեցոց։

Յիսուս յանդիմանեց փարիսեցւոց կուրութիւնը, շաբաթ օրն նրանց բարիք չգործելու պատճառով, սուրբ գրքից փաստ և վկայութիւն բերեց և մի հրաշք գործեց։

Կոյր և համր դիւահարին բժշկեց.

իմաց տուեց թէ՝ սուրբ Հոգւոյ դէմ եղած հայհոյութիւնը չպիտի ներուի և թէ դատարկ խօսքերի համար մարդիկ հաշիւ պէտք է տան Աստծուն։

Յանդիմանեց անհաւատներին որ նշան էին խնդրում, և ցոյց տուեց թէ Աստուծոյ կամքը կատարողներն են իւր եղբայրը, իւր քոյրը և իւր մայրը։

ԺԳ.

Աստուծոյ արքայութեան առակներ

Յիսուս խնամքով սովորեցրուց և բացատրեց մարդկանց։

Սերմնացանի առակով ճանապարհի

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ԳՐԱԴԱՐԱՆ

A 1/8 995

վրայ, քարքարոտ տեղում, փշերի մէջ, և պարարտ հողում ընկած հատիկնե-
րի արտիւնքն։

Որոմ առակով թէ՝ ինչպէս բարի սերմ ցանող մարդու թշնամին գալիս, և որոմն է ցանում, նրա արտի մէջ։

Մանանէի առակով թէ՝ նա ոչքան փոքրէ, բայց երբ մեծանում է, մինչև անգամ երկնքի թռչունների համար անգամ, պիտանի ծառ է լինում։

Խմոր առակով թէ՝ ինչպէս փոքրիկ խմորը շատ ալուր է խմոր դարձնում։

Ծածկուած գանձ առակով թէ՝ արտում թագցրաց գանձի համար մարդը իւր բոլոր ունեցածը ծախում ու այն արտն է գնում։

Մարգարիտ առակով թէ՝ ինչպէս նրա լարդը գիտացող վաճառականը իւր բոլոր ունեցածը տալիս և այն մարգարիտն է ձեռք բերում։

և Ծովը Յիսուսի առակով թէ՝ ինչպէս ուռկանի մէջ ժողովումեն բոլոր տեսակի ձկներն, լցուելուց յետոյ ցամաք են դուրս քաշում ու բաժանում, լաւերը ամանի մէջ, իսկ վատերն դուրս ձգում։

Այս առակներով Յիսուս բացատրեց Աստուծոյ արքայութեան ժառանգորդ լինելու միջոցներն։ Եւ ինքը անարգուեցաւ իւր Հայրենակիցներից։

ԺԴ.

Յովհաննես գլխատման. Քրիստոսի հինգ հապար հարիւրեան կերակուրը. Ձուկի վրայ գնալը։

Հերոդէս կարծում էր թէ Յիսուս Յովհաննէս-Մկրտիչն է, (*) և յարութիւնէ առել, որին ինքը գլխատել էր տուած։

Յիսուս երբ լսեց Յովհաննէսի գլխատուելը, հեռացաւ ու գնաց մի

(*) Յովհաննէս, Հերոդէս Անդիպասին յանդիմանեց, որ նա իւր Փիլիպպոս եղբօր կինը՝ իրան կին էր առել։

Հերոդէս փարիսեցւոց խորհրդով Յովհաննէսին բանտարկեց, և ապա Հերոդիադայի խնդրանօք նրան գլխատել տուեց։

անապատ տեղ։ Եւ հետեւեցին նրան շատ ժողովուրդ։ այն տեղում Յիսուս հինգ հազար հոգի կերակրեց հինգ նկանակով եւ երկու ձկով։

ԺԵ.

Փրկչի առանձնանալը։ Փառաւոր կնոջ պատմութիւնը։ Հոգու մարդկանց կերակրելը։

Յիսուս յանդիմանեց գրիչներին եւ փարիսեցիներին, որոնք իրանց աւանդութեանց պատճառով զանցառութեան էին տալիս Աստուծոյ պատուիրանների։ Եւ ժողովրդուց թէ ինչպէս մատաղ բանը մարդուս չէ

պղծում, այլ բերնից և սրտից ելածներն են պղծում։

Եւ բժշկեց Քանանացի կնոջ դուստրը և ուրիշ շատ ժողովուրդ. եօթն նկանակով և մի քանի ձկով չորս հազար այր մարդիկ կշտացրուց. բացի կանանցից և երեխաներից։

ԺԶ.

Փարիսեցւոց նշան խնդրելը. նրանց խմորը. Պետրոսի դաւանութիւնը. Քրիստոսի չարչարանքը և նրան հետևողներէն խաչը։

Փարիսեցիք Յիսուսից նշան խնդրեցին նա պատուիրեց իւր աշակերտներին որ զգոյշ լինին փարիսեցւոց և սադուկեցւոց խմորից. այսինքն

նրանց կեղծաւորական աղանդներից։ Ժողովուրդը զանազան կարծիք ունէր Քրիստոսի մասին, և Պետրոս իւր և բոլոր աշակերտաց կողմից դաւանեց թէ՝ նա է Քրիստոսը Աստուծոյ որդին։ Յիսուս յայտնեց իւր մահը, և իրան հետևիլ կամեցողներին յորդորեց որ իւր խաչը (չարչարանք.) կրեն։

ԺԷ.

Քրիստոսի կերպարանփոխ պայծառափոխ լինելը. լուռնոցը. և երկիրտեառը։

Յիսուս իւր երեք աշակերտաց հետ թափոր լեառը բարձրացաւ, ուր երեւացին Մովսէս և Եղիա, որ խո-

սում էին Յիսուսի հետ։ Յիսուսի կերպարանքը փոխուած տեսնելով աշակերտները ահաբեկ եղան։ Նա մօտեցաւ նրանց, սիրտ տուեց և զգուշացրուց որ ոչ ոքի չասեն, և երբ Քրիստոս սարից իջաւ բժշկեց լուսնոտին։

Նախաձայնեց իւր չարչարանքը, և երկրպամեան տուրքը տուաւ պահանջողներին՝ Պետրոսի ծովում բռնած ձկան բերանում գտած դրամով, գայթակղութիւն չը լինելու համար։

ԺԸ.

Քրիստոսի յուրտուրական խրատները ու պատուիրանները. և Ժառանգներից հոգին պահանջող Ընտրությունը։

Յիսուս պատուիրեց իւր աշակերտներին, որ խոնարհ և հեզ լինին, գայթակղութեան պատճառ չը լինին փոքրիկներին չ՝անարգեն. սովորեցրուց թէ ինչպէս վարուելու ենք մեր եղբայրների հետ, երբ նրանք մեր դէմ մեղանչում են. և թէ՝ միշտ զգուշացնելու ենք նրանց ներողամտաբար։

Բացատրեց թագաւորի առակով, որը հաշիւ էր ուզում իւր ծառաներից, և իւր ընկերոջն ողորմութիւն ցոյց չտուող ծառայի չարաչար պատժուելն նկարագրեց։

ԺԹ.

ԿԻՆ ԱՐՁԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ. ՓԸՐԻՍԵՑՈՑ ԷՐԵԽԱՆԵՐԻՆ ՕՐՀՆԵԼԸ ԵՒ ԳՈՐԾՈՒԵԱՆ ՎԱՆԴԸ։

Յիսուս բժշկեց հիւանդներին, պատասխանեց կին արձակելու պատճառով փարիսեցւոց-Հրէից կարդացողներին արած հարցմանը, արհամարհելով նրանց խստասրտութիւնը, ասելով թէ զոր աստուած զուգեաց մարդ մի մեկնեսցէ։ արձակողին ու արձակեալն առնողին շուն կոչեց։

Եւ փոքրիկ երեխաներին ընդունեց, և սովորեցրուց պատանուոյն թէ՝ ինչպէս կարողէ ստանալ յաւիտենական կեանքը, և թէ՝ ինչ անելուէ նա՝ որ

կատարեալ լինի, իւր աշակերտացը ասաց թէ՝ ինչպէս դժուարէ հարստին Աստուծոյ արքայութիւնը մտնել։ երբ յոյսը իւր հարստութեան վրայ դրած է. և վարձ խոստացաւ նրանց, որ իւր ետևից գնալու համար որևէ զրկանքի պէտք է ենթարկուին։

Ի.

Այդ-մ աշխատողները. Քրիստոսի ընդդիմանքը. աշխէրատց պատուաստիրոնը։

Յիսուս տանուտիրոջ առատասրտութեամբ այգւոյ բանուորների առակով ցոյց տուեց Աստուծոյ արդարութիւնը և հաւասար վարձատ-

բութիւն տալը ամենքին և յանդիմանեց չար ակն մշակին։

Եւ Զեբեդիայի որդւոց մօրը իւր որդւոց համար խնդրածը աւելորդ համարեց և նրան պատասխանելով սովորեցրուց իւր աշակերտացը, որ խոնարհ լինին։

ԻԱ.

Քրիստոսի Երուսաղէմ մտնելը։ Տաճարը մաքրելը։ Ընդհանր տնի ծելը։ Էլիա-որդւոց և չար մշակների տուսանելը։

Յիսուս էշի վրայ նստած՝ Երուսաղէմ մտաւ, տաճարից (*) դուրս

(*) Երկրորդ տաճարն էր երեք սրահով մեծ և փառաւոր մի շինուած. առաջին սրա-

արաւ առտուր անողներին։ Ծանապարհին անպտուղ թզենուն անիծեց, որ շուտով չորացաւ։ Պապանծեցրուց քահանաներին և ծերերին, և յանդիմանեց նրանց, օրինակ բերելով մի հօր երկու որդիքը, որոց ուղարկումէր իւր այգին բանելու։ Եւ այն մշակների անիրաւ գործողութիւնը, որոնք այգետիրոջ ուղարկած այգուայ պտուղը պահանջող մշակներին բռնեցին տանջեցին, սպանեցին, քարկոծեցին, մինչեւ անգամ այգետիրոջ որդին սպանեցին, որ այգին իրանք սեփականեն։

Հուժ՝ հեթանոսներն (հրէայ չլինողներն.) ևս կարող էին մտնել, այն տեղ Քրիստոսի ժամանակ կենդանիներ վաճառելու տեղ էին դարձրած։ Հրէից մէջ հարուստ լինողն առջաւ ու ոչխար, աղքատ լինողն աղաւնի պատարագ մատուցանել պարտաւոր էր։ Ուխտաւորների համար դիւրութիւր էր տաճարում գնել իրանց մատաղները և դրամներ մանրացնելը։

ԻԲ.

Թագաւորի սրբոյ հարսանիքը. կայսէր հարկ պալը. յարս-ընկան ապաշխարանքը. սահմանն պարտէրանքը:

Յիսուս թագաւորի սրբոյ հարսանեաց առակով յայտնեց թէ՝ հեթանոսները և երկնից թագաւորութիւնը պէտք է հրաւիրուին. հար-

---

Քահանայք հեթանոսաց արհամարհելու մտքով այն սրահը մտանաւոր փարձով առջաւ ոչխար և աղաւնի ծախող փաձառականներին էին առուած։ Քրիստոս այս բանը տեսնելով շատ վշտացաւ, որ հեթանոսաց համար մի փոքրիկ տեղ էլ չէին թողաց Աստուծոյ երկրպագութիւն և փառաբանութիւն մատուցանելու համար։

սանեաց Հանդերձ չունեցողի պատիժը նկարագրեց և կայսեր տուրքատալը օրինաւոր համարեց։

Յայտնապէս հերքեց Սադուկեցւոց մոլորութիւնը. մեռելոց յարութիւն չըհաւատալու համար։ Պատասխանեց օրինականին թէ՝ ո՞րն է մեծ և առաջին պատուիրանքը։ Փարիսեցիք հարցեր տուին Մեսիայի համար, և Յիսուս նրանց ևս պատասխանեցրուց։

ԻԳ.

Դպրաց և Փարիսեցւոց վրէժխնդրութիւնը. նրանց հոգէմէջ կրծանումը։

Յիսուս խրատ տուեց ժողովրդոց, որ հետևին դպրաց և փարի-

սեցուց բարի վարդապետութեանը, և փախչին նրանց կեղծաւորական ձեւերից. նոյնպէս և իւր աշակերտացը խրատեց որ զգոյշ կենան նրանց փառասիրութիւնից։

Ութն անգամ վայ կարդաց նրանց դպրաց և փարիսեցւոց վրայ, և նրանց կեղծաւորութիւնը և կուրութիւնը իրանց երեսին տուեց. և Երուսաղէմի կործանումը նախաձայնեց։

ԻԴ.

Տաճարի կործանումը. և Քրիստոսի գալուստը։

Յիսուս նախաձայնեց տաճարի կործանումը, Երուսաղէմի վերահաս

մեծ թշուառութիւնները, իւր երկրորդ գալստեան և դատաստանի նշանները։

Վերջին օրն ու ժամը մեզ անծանօթ լինելը յայտնեց, և պատուիրեց որ արթուն մնանք այն բարի ծառայի նման, որ ամէն վարկեան իւր տիրոջ գալստեանն էր սպասում։

ԻԵ.

Տասն կոյսերը, փանոցներէն
ասակը վերջին դոպասոպանը։

Յիսուս իւր վերջին գալստեան օրինակը բացատրեց տասն կոյսերի և հեռու աշխարհ գնացող իւր կարողութիւնը հինգ, երկու, և մէկ քան-

քարներով՝ իւր ծառաներին բաժանող՝ մարգու առակով։ վերջին դատաստանի օրն իւր կամքը կատարողների և հակառակը գործողների լսելու պատասխանը ձայնեց։

«Եկայք օրհնեալք Հօր իմոյ ժառանգիցէք զպատրաստեալն ձեզ արքայութիւն և այլն»։ եւ «Երթայք ի մէնէն անիծեալք ՝ի հուրն յաւիտենական և այլն»։

Այս ասելով արդարների և մեղաւորների հատուցումն յայտնեց։

ԻԶ.

Քրիստոսի ոճրը. Յուդայի
մատնությունը. երեսուն արծաթը.
Հաղորդությունը. Աղօթքը. մատնությունը.
և քահանայապետի տունը։

Յիսուսի դէմ իշխանները խորհուրդ արին կորցնել բեթանիայում Սիմէօն բորոտի տանը. հիւր եղած ժամանակ մի կին իւղով նրա գլուխը օծեց։ Յուդան Յիսուսին մատնեց քահանայապետներին երեսուն արծաթով։ Բաղարջակերաց առաջին երեկոյին Յիսուս զատիկը կերաւ իւր աշակերտաց հետ, և սահմանեց սուրբ պատարագի խորհուրդը, առաւ հացը տուեց նրանց և ասաց. «Առէք կերէք

այս է մարմին իմ»։
և բաժակն առաւ գոհանալով տուեց նրանց և ասաց. «Արբէք ՝ի սմանէ ամենեքեան այսէ արիւն իմ նորոյ ուխտի»։

Ընթրիքից յետոյ տասն և մէկ աշակերտաց հետ գնաց Զիթենեաց սարը, պարտեզի մէջ Աղօթք արաւ։ Յուդան իւր հետ բերաւ մեծ ամբոխ սրերով և բրերով և մէկ համբոյրով մատնեց իւր մեծ վարդապետին, նրանք էլ Յիսուսին կապած տարան Կայիափայ քահանայապետի առաջ։ Պետրոս իւր տիրոջն ուրացաւ երեք անգամ, և ապա Տէրոջ խօսքը միտը բերեց և դուրս գնաց ու դառնապէս լաց եղաւ։

ԻԷ.

Բլխոպոսի ջրջրանքը Պիղատոսի առաջ. Էլէ պոսկը. Խաչելը-ընելը. մանը և Ռաղոմը.

Յիսուսին Պիղատոսի առեանը տարան կապուած, դատապարտութեան ենթարկեցին այլ և այլ չարախօսութեամբ։ Յուդան իւր արած յանցանքի մեծութիւնը զգալով գնաց խեղճամտաց եղաւ։

Պիղատոս իւր կնոջից խրատուած՝ իւր ձեռքերը լուաց և Յիսուսի անմեղ լինելը վկայեց, բայց ժողովրդեան հաճոյքը կատարելու համար, փոխանակ Յիսուսի՝ խռովարար Բարաբբայ անուանի քանտարկեալին արձակեց։

Այնուհետեւ Յիսուս փշերով պսակուեցաւ, խաչուեցաւ փայտի վրայ գողգոթայում, և նախատուեցաւ հրէից քահանայապետներից, ծերերից և գպիրներից։ Խաչի վրայ Յիսուսին լեղուոյ հետ խառնած գինի տուին խմելու, շորերն էլ զինուորները վիճակով բաժանեցին, յանցանաց տախտակն էլ Պիղատոսից գրուած գրին Յիսուսի խաչի վրայ, թէ «սա է Յիսուսը, Հրէից Թագաւորը»։ Յիսուսի հետ խաչեցին երկու աւազակներ էլ մինը աջ կողմը, միւսը ձախ։

Եւ օրուայ վեց ժամից մինչի ինը ժամը բոլոր երկրի վրա խաւարը տիրեց և ինը ժամին մօտ, Յիսուս իւր համար սահմանուած բոլոր չարչարանքներն լրացած համարելով մեծ ձայն արձակեց և հոգին աւանդեց։ և շուտով տաճարի վարագոյրը

(*) պատառուեց։

Արեմաթացի Յովսէփի ձեռքով Յիսուս թաղուեց նոր փորած գերեզմանի մէջ։ Հրէաները Յիսուսի գերեզմանը կնքեցին և պահապան զինուորներ կանգնեցրին գերեզմանի վրայ։

(*) Վարագոյրը պատառուիլը՝ նշան էր որ Քրիստոսի մահուամբը՝ Մովսիսական օրինաց դադարուելուն։

Եւ անմիջապէս շնորհաց օրէնքն սկսուեց։ երկինքը բացուեց։ և Աստուածային ճշմարիտ կրօնը աշխարհիս յայտնուեց։

ԻԸ.

Քրիստոսի յարութիւնը. և հրամանները, իւր աշակերտացը։

Յիսուսի հրաշափառ Յարութիւնը հրեշտակ աւետեց կանանց. Յիսուս գերեզմանից յարութիւն առնելով երեւեցաւ նրանց։

Քահանայապետները դրամ տուին զինուորներին, որ ասեն թէ՝ Յիսուսին իւր աշակերտները գիշերը գերեզմանից գողացելեն, իրանց քնած ժամանակը։

Յիսուս իւր աշակերտաց եւս երեւաց գալիլիայի սարուն, ուր նրանց ժամագիր էր եղած, և ուղարկեց նրանց

բոլոր հեթանոսաց քարոզելու, աշակերտելու և մկրտելու, Հօր և Որդւոյ և Ս. Հոգու անունով և նրանց պատուիրեց պահել իւր պատուէրները, և խոստացաւ լինել նրանց հետ մինչի աշխարհիս վերջը։



ՀԱՄԱՌՕՏ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ
ՄԱՐԿՈՍԻ Ս. ԱՒԵՏԱՐԱՆԻ.

Ս. Մարկոս աւետարանիչ Յիսուսի եօթանասուն աշակերտաց մին, գործակից և հետևող Պօղոս առաքելոյ, գրեց իւր աւետարանը Աղէքսանդրիայում Եգիպտական լեզուով Ս. Հոգւոյ ազդմամբ, Քրիստոսի երկինք համբառնալուց տասն և հինգ տարի յետոյ, Տիրոջ հաւատացող եղբարց աղաչանքով.

Սա նկարագրեց Յովհաննէսի քարոզութիւնը, Յիսուսի մկրտութիւնը Յովհաննէսից. Նրա փորձութիւնը. Աշակերտաց ընտրութիւնը Նրա հրաշագործութիւնները, նշանները և արուեստները. Աշխարհիս վերջը լինելու բաները, Մատնութիւնը. Մարմնով խաչուիլը. Նրա հանգերձները զինուորաց մէջ բաժանելը. Մարմինը գերեզմանի մէջ դրուիլը. Երեք օրից յարութիւն առնելը. Հրեշտակին կանանց երևալը. Քրիստոսի յարութիւնը նրանց պատմելը. Աշակերտաց լսել և պատմելն ուրախութեամբ և Նրա երկինք համբառնալը.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՄԱՐԿՈՍԻ Գլ. Ա.

Քրիստոսի մկրտութիւնը. Փորձութիւնը. Տարեալը. ասուածէլոց խօսելը. և հիւանդներ բժշկելը.

1. Մարկոս իւր աւետարանը սկսեց Յիսուսի կարապետ Յովհաննէսի անապատում երևալուց՝ քարոզութեան և մկրտութեան պաշտօն կատարելուց։

Յիսուս Յորդանան գալով մկրտուեցաւ Յովհաննէսից և տարուեցաւ Հոգւով անապատ սատանայից փոր-

ձուելու, մնաց այնտեղ քառասուն օր ու գիշեր, գազաններից չը վնասուեցաւ հրեշտակներից պաշտուեցաւ։

Յովհաննէս մատնուելուց յետոյ՝ Յիսուս քարոզեց իրան հետևիլ առաքելութեան կոչեց Պետրոսին, Անդրէասին, Յակոբոսին և Յովհաննէսին, բժշկեց դիւահարին, Պետրոսի զօքանչին, և ուրիշ շատ հիւանդներին և բորոտին սրբեց։

Բ.

Անդամալուծը, մաքրեսի կոչը—մը, փրկուսի պատգամը, պահք և աղօթք չը պահելու մասին։

Յիսուս բժշկեց անդամալուծին, իրան հետևելու կանչեց Մատթէոս մաքսաւորին, մաքսաւորներին և մե-

դաւորների հետ հաց կերաւ, և իւր աշակերտաց ծոմ չը պահելը, և շաբաթ օրը արտերից անցնելու ժամանակ նրանց ցորենի հասկեր կտրել ուտելները՝ արդարացրուց։

Գ.

Զորոյոյ ֆիւտը, պտուղները աշակերտները, կորոյոշները հայհոյուելը, տրիսոսի եղբայր տոյը և մայրը։

Յիսուս բժշկեց մի մարդու չորացած ձեռքը և ուրիշ շատ ցաւագարներին, պիղծ ոգիներ յանդիմանեց իրա համար տասներկու աշակերտներ ընտրեց, յայտնապէս ցոյց տուեց նրանց և ասաց, թէ՝ նոցա կարծիքն որ իրը ինքը բէեղզեբուղով դևեր է

հանում, այդ սուրբ հոգւոյ դէմ հայհոյութիւն է, իւր քարոզութեան ունկնդիրներին համարեց իրան եղբայրներ քոյրեր և մայր։

Դ.

Քրիստոսի առաջ այլ և այլ առակներէն և Յովհ. մբջիկը։

Յիսուս պատմեց սերմանացանի առակը, և այն առակի մեկնութիւնը պարզաբանելով ասաց, որ մենք պարտաւոր ենք մեր գիտութեան լոյսը ուրիշներին ևս հաղորդել։

Նմանապէս և ծածուկ աճեցող սերմի և մանանեխի հատի առակն ևս պատմեց, և հանդարդեցրուց Յովի ալէկոծութիւնը։

Ե.

Քրիստոսի բժշկութիւնները։

Յիսուս բժշկեց դիւահար մարդուն, և նրանից գուրս եկող դևերը՝ Յիսուսից հրաման խնդրեցին և խոզերի մէջ մտան, նաև բժշկեց տեռատես կինը և Յայրոսի մեռած դուստրը կենդանացրուց։

Զ.

Քրիստոսի անալիքները, սատանէից սուրբերը, Յովհաննէսի գլխատումը, ժողովրդեան կերակրելը և ծովի վրայ մանելը։

Յիսուս եկաւ իւր գաւառը և քարոզեց իւր քաղաքացիներին, բայց՝

նրանց գայթակղութիւնը տեսնելով առանց հրաշագործութիւն անելու հեռացաւ նրանցից։ Իւր տասներկու աշակերտացը իշխանութիւն տուեց պիղծ ոգիներ հանելու, հիւանդներին իւղով օծելու և բժշկելու։

Ֆրիսեոսի համար զանազան կարծիքներ եղան։ Յովհաննէս—մկրտիչ գլխատուեցաւ ու թաղուեցաւ. առաքեալները իրանց քարոզութիւնից վերադարձան Յիսուսի մօտ, իրանց տեսածներն ու գործածները պատմեցին։ Յիսուս հինգ հացի և երկու ձկան հրաշքը կատարեց, ծովի վրայ մտան եկաւ, և ամէն իրան հանդիպող ցաւագարներին բժշկեց։

Է.

Քրիստոսի քարիսեցոց կեղծաւորութիւնը։

Յիսուսի աշակերտներին երբ փարիսեցիք մեղադրում էին անլուայ ձեռքով հաց ուտելու համար։

Յիսուս յայտնեց նրանց որ իրանք էլ մարդկանց աւանդութիւնները պահելով Աստուծոյ պատուիրանքները անարգում են, և թէ կերակուրը մարդուս չի պղծեր. փիւնիկ Աստի կնոջ դուստրը պիղծ ոգուց ազատեց խուլ և համրին (մռնչ) բժշկեց։

Ը.

Քրիստոսի Եօթը հացով գործած հրաշքը, կոյրերի ցաքուցիր աչքերը բացելու եւ յոյսոնիցեան գողգոթան։

Յիսուս Եօթը հացով կերակրեց չորս հազարի չափ ժողովուրդ, Փարիսեցւոց խնդրած նշանը չը կամեցաւ տալ, աշակերտացը պատուիրեց որ զգուշ լինին փարիսեցւոց եւ Հերովդէանոսաց խմորից, եւ նրանց յանդիմանեց՝ որ իւր հրաշագործութեամբ բազմութեան կշտանալը չը մտաբերելով՝ հաց չը վերառնելու համար մտածում էին։

Մի կոյրի աչքերը բացեց, եւ յայտնեց որ ինքն է Քրիստոսը, եկել է որ պի-

ոի չարչարուի և յարութիւն առնէ, և իւր աշակերտացը յորդորեց որ Աւետարանի դաւանութեան համար սիրով համբերեն, երբ որ հալածուին։

Թ.

Քրիստոսի պայծառակերպութիւնը։ Լուսնոտը, խոնարհութեան և գայթակղութեան հաւին խօսք։

Յիսուս սրանից վեց օր յետոյ իւր հետ վեր առաւ իւր աշակերտներից երեքին, բարձրացաւ (Թափոր) մի բարձր սար առանձին և այլակերպուեցաւ, և ցոյց տուեց իւր աշակերտացը իւր Աստուածութեան փառքն, ուր երևացին Մովսէս և Եղիա, որ խօսում էին Յիսուսի հետ, այն ամէն

անդքերի վրայ, որ պիտի պատահէին նրան Երուսաղէմում, և ամպի միջից լսուեց ձայն. «Դա է իմ սիրելի Որդին, Դրան լսեցէք։» Երբ որ սարից իջնում էին, Յիսուս իւր աշակերտաց բացատրեց Եղիայի գալուստը, նախաձայնեց իւր չարչարանքը մահը և յարութիւնը, խուլ և համրից գևը հանեց, յորդորեց իւր աշակերտացն որ հեզ լինին, և պատուիրեց նրանց որ իրան հակառակ չը լինողներին հրաշագործութիւն անելը չարգելին, ոչ ոքի՝ գայթակղութեան պատճառ չը լինին, և մինչև անգամ հաւատացեալներին գայթակղեցնող անդամները կտրեն։

Ժ.

Քրիստոսի վերական խօսքը կին աշակերտներին, մանուկները օրհնելը, և այլ պատահարները։

Յիսուս Հրէաստանի սահմանը գնաց, փարիսեցիք Մովսիսի օրինաց համաձայն հարցնում էին կնամեղ լինելու համար, Յիսուս ամուսնացածների միութիւնը սկզբից անբաժան հաստատուին յայտնեց, իրան մօտկացրած մանուկներին օրհնեց, նմանապէս յայտնեց աշակերտացը ընչասէրների խիստ մեծ դժուարութեամբ Աստուծոյ արքայութիւն մտնելը, վարձ խոստացաւ նրանց որ աւետարանի համար իրանց ունեցածներից պէտք զրկուին, և նախա-

ձայնեց իրա մահը և յարութիւնը, իւր երկու փառասէր աշակերտացը ևս խրատեց, որ աւելի իրա հետ չարչարուելու մասին մտածեն, և կոյր բարտիմէոսի աչքերը բացեց։

ԺԱ.

Քրիստոսի Երուսաղէմ մտնելը, ընդհանուր անէծքը, և տաճարի մաքրելը։

Յիսուս էշի վրա նստած Երուսաղէմ մտաւ Հանդէսով, անպտուղ թզենին անիծեց, տաճարը եկաւ և առ և տուր անողներին դուրս արաւ, իւր աշակերտացը յորդորեց, որ Հաստատ Հաւատ ունենան և իրանց թշնամիներին ներեն, իւր իշխանաբար

գործելու օրինաւոր լինելը քահանայապետին յայտնեց Յովհաննէսի մկրտութեան օրինակով։

ԺԲ.

Զոր հրամայեցը, կայսեր հարկ տալը,
մեծ պարտաւորութիւնը, Քրիստոս
ամ ուրիշ լինելը,

Յիսուս նախաձայնեց հրէից մերժուիլը և հեթանոսաց կոչուիլը՝ ապերախտ մշակների ձեռքը յանձնուած այգւոյ առակով, պատասխանեց Փարիսեցւոց և հերովդիանոսաց նենգ հարցին, Կայսեր հարկ տալու համար, ցոյց տուեց սադուկեցւոց իրանց մոլորութիւնը յարութիւն չկայ ասելու համար, մեծ և առա-

ջին պատուիրան հարցնող դպրի խնդիրը լուծեց, ցրեց այն կարծիքն, որ դպիրները ունէին Քրիստոսի համար թէ՝ նա դաւթի որդի է, և պատուիրեց ժողովրդեան որ զգոյշ մնան նրանց փառասիրութիւնից և կեղծաւորութիւնից։ Քրիստոս գովեց երկու լումայ տուող աղքատ որբ և այրուն։

ԺԴ.

Քրիստոսի գո-շակո-ղի-նը։

Յիսուս նախաձայնեց թէ, Երուսաղէմի տաճարը պիտի կործանուի, թէ աւետարանի համար խիստ հալածանքներ պիտի լինին, թէ մեծամեծ թշուառութիւններ պիտի գան հրէից

վրայ, և թէ ինքը ինչ կերպով՝ վերջը պիտի գայ դատաստան անելու, վերջին օրը և ժամը բնաւ մէկին յայտնուած չը լինելու համար, Քրիստոս պատուիրեց՝ արթուն. կենալ և աղօթք անել։

ԺԴ.

Քրիստոսի օձը, հաղորդությունը, պարտէզի աղօթքը, մատնութիւնը, և Պետրոսի ի-ը Տէրն ուրանալը։

Զատկի օրերում Յիսուսի դէմ հրէայք սկսեցին դաւաճանութիւն անել, բորոտ սիմէոնի տան հացկերոյթի ժամանակ, մի կին նրա գլխի վրայ մի շիշ պատուական իւղ թափեց,

Յուդան իւր Տիրոջը վաճառեց հրէից քահանայապետներին փողով։ Քրիստոսալանեց իւր աշակերտացը թէ ներքանցից մէկը իրան պիտի մատնէ։ Զատիկը պատրաստելուց և ուտելուց յետոյ, Քրիստոս հաղորդութեան սուրբ խորհուրդը սահմանեց։ Եւ ապա գընաց Գիթենեաց սարը ուր աշակերտացը յայտնեց նոյն գիշերուան իւր մատնուիլը, եկաւ գեթսամանի գիւղը, որ տեղ առանձնացաւ Յիսուս Հօր Աստուծոյ աղօթք անելու, և բռկաւ տրտմիլ և հոգալ։ Յիսուս նախաձայնեց որ նոյն գիշեր իւր բոլոր աշակերտները պէտք է ցրուին, և յայտնեց Պետրոսի ուրացութիւնը։ Յուդան համբուրելով մատնեց Քրիստոսին։ Քրիստոս պատրիգի մէջ բռնուեցաւ, սուտ վկաներից ամբաստանուեցաւ, և ամբարիշտ վճռով

դատապարտուեցաւ Հրէից առնուն։ Հրէայք եւս անարգանքով չարչարեցին Քրիստոսին։ Պետրոս երեք անգամ ուրացաւ իւր Տիրոջը, և երբ միտքն եկաւ Տիրոջ խօսքը, սկսեց լաց լինել և զղջալ։

ԺԵ.

Քրիստոսի ողջերեանքը։ Քրիստոսի պատկը, խաչելութիւնը, մահը և թաղումը,

Յիսուս կապուած տարուեցաւ Պիղատոսի առաջև ամբաստանուեցաւ։ Պիղատոս ժողովրդի մեծ աղաղակին նայելով՝ մարդասպան բարաբբային արձակեց, և Յիսուսին յանձնեց նրանց ձեռքն՝ որ խաչուի։ Քշից պատրաստած պսակ դրեցին Յիսուսի

գլխին, նրա երեսին թքեցին, նրան ծաղրեցին, խաչեցին երկու չարագործների մէջ տեղը։ Հրէայք սատանիկ նախատինքներ տուին Յիսուսին և Յիսուս օրուայ իններորդ ժամից մեծ ձայն արձակեց և Հոգին աւանդեց, այս որ տեսաւ Հարիւրապետը խոստովանուեցաւ թէ՝ նա Աստուծոյ Որդի էր, եւ Արեմաթացի Յովսէփ համարձակուեցաւ մտաւ Պիղատոսի մօտ և Յիսուսի մարմինը խնդրեց, և պատուով թաղեց նոր փորած քարէ գերեզմանի մէջ, և մի մեծ քար էլ ձգեց գերեզմանի դրանը։

ԺԶ.

Քրիստոսի Յարութիւնը և Հաւքաջոյնը.

Յիսուսի յարութիւն առնելը հրեշտակ աւետեց միաշաբաթի առաւօտեան խնկաբեր երեք կանանց։ Քրիստոս էլ յարութիւն առած երևեցաւ մարիամ մագթաղինացուն, և իւր երկու աշակերտացը, յետոյ տասն և մէկ Առաքելոց, և նրանց ուղարկեց Աւետարանը քարոզելու և ասաց ո՛վ որ հաւատայ՝ և մկրտուի՝ կ՚ապրի, և ո՛վ որ չը հաւատայ կը դատապարտուի, հաւատացեալներն իմ անունովս իշխանութիւն կ՚ունենան դևեր հանելու, լեզուներ խօսելու, իրանց ձեռքովը օձեր վերառնե-

լու, և թէ որ մահագեղ էլ խմեն՝ վնաս չի տալ նրանց, հիւանդների վրայ ձեռք կը դնեն և կը բժշկեն։ Այս ամեն պատուերներն տալուց յետոյ, Տէր Յիսուս ինքը նրանց հետ խօսելով երկինք համբարձաւ, և Հոր աջ կողմը նստաւ։

ՀԱՄԱՌՕՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՂՈՒԿԱՍԻ Ս. ԱՒԵՏԱՐԱՆԻ

Ս. Ղուկաս աւետարանիչ-բժիշկ գործակից և հետևող Պօղոս առաքելոյ՝ տեղեակ Ասորի՝ Եբրայեցի և Յոյն լեզուներին՝ ականատես լինելով Յիսուսի սքանչելեաց՝ աշակերտեցաւ ու գրեց Անտիոքում Աւետարանը Ս. Հոգւոյ ազդմամբ Քրիստոսի համբարձման տասն և եօթնեքսան տարին Ասորոց լեզուով։

Սա գրեց իւր աւետարանը Յովհաննու ծնունդից՝ հրեշտակի աւետմամբ՝ Փրկչի Ս. Մարիամ կոյսից մարմնանալը՝ Ազգաթիւը Յովսէփից մինչի Դաւիթ՝ և դաւթից մինչի Ադամ՝ Յովհաննէսից մկրտուիլը՝ Անապատում առանձնանալը՝ և սատանայից փորձուիլը՝ իշխանութիւն տալը իւր տասնեկու Առաքեալներին՝ և եօթանասուն երկու աշա-

կերաններ ընտրելը։ և նրանց երկու երկու ուղարկելը։ Հրաշագործութիւններ։ Նշաններ և շատ արուեստներ ցոյց տալը։ Աշխարհիս վերջը լինելու սարսափելի յայտնութիւնները։ Մատնութիւն։ Պոնտացի Պիղատոսի դատաստանը։ Մարմնով խաչուիլը։ Հանդերձները զինուորների մէջ բաժանելը։ Եւ երկու աւազակներից մինի խոստովանութեամբ ապաշխարելը։ Յիսուսի մարմինը գերեզմանի մէջ դրուիլը։ Երեք օրից յարութիւն առնելը։ Երկինք վերանալը և հրեշտակների երևալը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՂՈՒԿԱՍՈՒ ԳԼ. Ա.

Յովհաննէսի և Փրկչի ծընդեան աւետիսը, Ս. Մարիամ կոյսի Եղիսաբէթին մօտ գալը և Յովհաննէսի ծնունդը։

Ղուկաս Աւետարանիչ գրում է Անտիոքայ եկեղեցւոյ հաւատացեալներին, որ տեղեկանան Փրկչի բովանդակ ճշմարտութեանը։

Սա սկսեց իւր աւետարանը Զաքարիայ քահանայի և նրա կնոջ Եղիսաբէթի անցքից, նրանք իրանց բոլոր կեանքը արդարութեամբ էին անցկացրել և անգաւակ էին ծերութեան հասակում։

Զաքարիան իւր հերթակարութեան՝ տաճարում խնկարկութեան ժամանակ, Գաբրիէլ հրեշտակին տեսաւ սեղանի աջկողմում կանգնած և սարսափեցաւ։ Հրեշտակը սիրտ տալով նրան աւետեց և ասաց, որ նրա կին Եղիսաբեթը որդի պիտի ծնի, որի անունը Յովհաննէս պիտի կանչեն։ Զաքարիան իւր և կնոջ ծերութեան պատճառով չը հաւատաց, հրեշտակ նրա թերահաւատութիւնը պատժելով պապանձացրեց, մինչև երեխի ծնած օրը։ Սրանից վեց ամիս յետոյ Գաբրիէլ հրեշտակը սուրբ հոգւոյ զօրութեամբ Փրկչի ծնաւնդը աւետեց սուրբ կոյս Մարիամին։ Մարիամ Եղիսաբեթին այցելութեան գնաց, ողջոյն տալու բոպէին Եղիսաբեթի երեխան արգանդում խաղաց, և մարգարէացաւ՝ սուրբ կոյսի Աստուածամայ-

բութեան համար, որին պատասխանեց Ս. կոյսը՝ մարգարէական հոգով Աստուածանից ստացած շնորհքի մասին մեսիայի ծննդեամբ։

Մարիամ երեք ամիս այնտեղ հիւր լինելուց յետոյ դարձաւ իւր տուն։ Եղիսաբէթի ծնելու օրերը մօտեցան և ծնաւ որդին, որի անունը հրեշտակի պատուերի համաձայն Զաքարիայն տախտակի վրայ նշանագրեց «Յովհան»։ և իւր պապանձուած լեզուն բացուեցաւ և սուրբ հոգով մարգարէացաւ իւր որդու Փրկչի առաջ կարապետ լինելը։

Մանուկը հետզհետէ մեծանում էր և հոգւով զօրանում՝ մինչի Քրիստոսի մկրտութեան գալու ժամանակը, նա անապատում էր բնակում, Աստծու հրամանով գնաց Յորդանան և քարոզեց ապաշխարութիւն, իրանց մեղ-

քերը խոստովանողներին մկրտում էր, և աւետում Աստուծոյ արքայութեան մերձենալը, այսինքն մեսիայի գալուստը։

Բ.

Քրիստոսի ծնունդը, անուանակոչութիւնը. Տէրունական տաճարում Սիմէոնի եւ Աննայի ծանօթանալը։

Հռովմայեցուց Օգոստոս կայսեր (ոչի իշխանութեան նեղոյ էին և հրէայք) հրամանով երբ առաջին անգամ աշխարհագիր էին անում նրա տէրութեան մէջ գտնուած բոլոր բնակիչներին, այդ միջոցին, Յովսէփ սուրբ կոյս մարիամին առած Գալիլիայի Նազարէթ

քաղաքից դնաց բեթղէհէմ, իւր նախնեաց քաղաքում աշխարհագրութեան մէջ գրուելու, որտեղ էլ ծնեց Քրիստոս փրկիչը իրանց իջևանած գոմի մէջ և խնամարկութեամբ փաթաթելով դրեցին մսրում։

Ցիրոյ հրեշտակը երևեցաւ հովիւներին, Ցիրոյ փառքը ծագեցաւ նրանց վրայ, որոնք գիշերը իրանց հոտերը պահպանում էին և մինչդեռ նրանք սարսափահար էին լինում, հրեշտակը սիրտ տալով ասաց «մի վախենաք որովհետև դաւթի քաղաքում այսօր ծնաւ ձեզ Փրկիչ, որ է օծեալ Տէր», նշան տուաւ նրանց, որ մանկանը կը գտնեն խանձարուրի մէջ պատած, և մսրումը դրուած։

Երկնային զօրաց բազմութիւն ևս իջաւ այնտեղ որոնք օրհնում էին Աստուած և ասում։

«Փառք 'ի բարձունս Աստուծոյ և յերկիր խաղաղութիւն 'ի մարդիկ հաճութիւն։»

Հրեշտակների վերանալուց յետոյ հովիւները գնացին Բեթղեհէմ, և գտան մանկանը և երկրպագութիւն տուին։

Ծննդեան ութերորդ օրը թլփատեցին մանկանը Մովսէսի օրէնքով և անուանը Յիսուս դրին Հրեշտակի ասածի համաձայն։

Եւ քառասներորդ օրը տաճարը տարան նրան Մարիամ և Յովսէփ, Սիմէօն արդար ծերունին որին Հրեշտակը ասել էր չը մեռնիլ մինչև որ տեսնի Տիրոջ օծեալին, նա այդ միջոցին սուրբ Հոգւոյ ազդեցութեամբ եկաւ տաճարը, առաւ մանկանը իւր գիրկը, օրհնեց նրան, և խնդրում էր իւր կեանքից արձակումն։ Եւ որի

համար տաճարում սպասաւորող ուխտաւոր չորս տարեկան Անան մարգարէացաւ։

Յիսուսի ծնողքը ամեն տարի զատկին գնում էին Երուսաղէմ։ Յիսուսի տասներկու տարեկան հասակում եւ երբ նրանք Երուսաղէմ գնացին իրանց ուխտագրութիւնը կատարեցին ու վերադարձան, Յիսուս մնաց այնտեղ առանց ծնողաց գիտութեան, և տաճարի մէջ հարցեր էր տալիս հրէից վարդապետներին քարոզում և զարմացնում էր, իսկ ծնողները ճանապարհից յետ դառնալով Յիսուսին գտան տաճարում և առան իրանց հետ և դարձան Նազարէթ, և Յիսուս զարգանում էր իմաստութեամբ և շնորհքով Աստծուց և մարդկանցից և էր հնազանդ իւր մարմնաւոր ծնողացը։

Գ.

Յովհաննէսի քարոզը, Քրիստոսի համար վկայութիւնը, և հիրտութիւնը

Յովհաննէս սկսեց իւր քարոզութիւնը անապատում և վկայեց Քրիստոսի համար, իւր մօտ եկողներին քարոզում էր, որ իրանց մեղքերը ապաշխարեն և ապաշխարողներին՝ ջրով մկրտում էր, և նախապատրաստում էր նրանց՝ ընդունել Քրիստոսի Ս. Հոգւով և կրակով մկրտութիւն։

Հերովդէս իւր բոլոր չարագործութեանց վրայ այս էլ աւելացրուց, որ Յովհաննէսին բանտարկել տուեց։ Եւ այդ ժամանակ Յիսուս էլ մկրտուեցաւ Յովհաննէսից յորդանան գե-

տում, ճիշտ երեսուն տարեկան հասակում, մկրտութեան միջոցին, Յիսուսի աղօթքով երկինք բացուեցաւ Ս. Հոգին իջաւ նորա վրայ ու վկայեց, և երկնքից ձայն եկաւ՝ որ ասում էր «Դու ես իմ սիրելի որդիս՝ քեզ հաւանեցայ։»

Յիսուսի ազգաբանութիւնը սկսվում է Յովսէփից մինչի Ադամ (բոլոր մարդկութեան նախահայրն) և նրա ստեղծող Աստուածը։

Դ.

Քրիստոսի փորձությունը և փառքը, քահանային, Պետրոսի զոքանչին և ուրիշ հիւանդներին ժըղջեցուցանելը։

Յիսուս Ս. Հոգով լցուած, յորդանանից գնաց անապատ, ծոմ պահեց քառասուն օր ու գիշեր, փորձուեցաւ ու յաղթեց սատանային, ըսկսեց քարոզել, Նազարէթի բնակիչներին, նրանք զարմանում էին նրա իմաստութեան վրայ, Յիսուս բժշկեց դիւահարին, Պետրոսի զոքանչին և ուրիշ շատ հիւանդներին, աղօթելով և ձեռքը նրանց վրայ դնելով. դևերը խոստովանուեցան թէ Քրիստոսն է ու յանդիմանուեցան նրանից։ Քրիստոս

քարոզեց Հրէաստանի մէջ քաղաքնե-
րում եւ գալիլեացւոց բոլոր ժողո-
վրդեան տասաց որ ինքը Հօր Աստու-
ծուց, այդ բանի համար է ուղարկ-
ուած։

Ե.

Պէտրոսի յա-ւ ք-ն-ելը, Քրիստոսի
բժշկո-ղի-ն-ելը, Մատթէոսի
կանչ-ելը. Առաքելոց պահ-ք ը
պահելը։

Յիսուս Պետրոսի նաւում նստած
սովորեցնում էր ժողովրդեանը, այդ
միջոցին ձկների հրաշալի որսով ցոյց
տուեց թէ Պետրոս եւ նորա ընկերները
ճարդկանց որսորդներ պիտի լինին։

Քրիստոս բոլոտին մաքրեց, մի ա-

նապատ տեղ առանձնացած՝ աղօթք էր անում, երբ վերադարձաւ անգամալոյծին բժշկեց, իւր մօտ կանչեց Մատթէոս մաքսաւորին, մեղաւորների հետ հաց կերաւ, աշակերտաց ծոմ չը պահելու համար յայտնեց Փարիսեցւոց՝ որ հարսանիքում չէ կարելի ծոմ պահել, և հասկացրուց որ՝ ինքը իբրեւ փեսայ քանի որ նրանց հետէ, նրանք ուրախանում են որ փեսայի հետ են, բայց երբոր ինքը նրանցից հեռանայ՝ իւր երկինք համբառնալով, այն ժամանակ կըգայ նրանց համար տրտմութեան, չարչարանքի և հալածանքի սգալի օրերը, այն օրերում պիտի պահք պահեն։

Զ.

Քրիստոսի շաբաթ օրուայ գործ-
էրը և խրատները, Առաքելոց
կանչելը։

Յիսուս իւր աշակերտաց շաբաթ օրը ցորենի հասկերից փշրուած հատիկներ ուտելու մասին՝ բամբասող փարիսեցւոց օրինակ բերեց Դաւթի սոված ժամանակ առաջաւորաց հաց ուտելը շաբաթ օրը։ Եւ մի մարդու չորացած ձեռք բժշկեց, և քարոզեց թէ շաբաթ օրը բարեգործութեամբ աշխատիլը մեղք չէ։

Քրիստոս տասներկու Առաքեալներ ընտրեց, և հիւանդներին բժշկեց. ժողովրդոց առաջ իւր աշակերտացը

խրատելով ցոյց տուեց թէ՝ որոնց կը վայելէ երանութիւն և որոնց վայ, և պատուիրեց թշնամին սիրել, Աստուծոյ խօսքին հնազանդուելով՝ բարիք գործել, որ չը լինի թէ առանց հիման հողի վրայ շինած տան նման կործանուին փորձութեան օրը։

Է.

Քրիստոսի հարիւրապետի պատուիրին քաջալերելը, նային փաղաքշանքի աչքի և այլի կնոջը ուրիշին կենդանացնելը, և մեղաւոր կնոջէց օծուելը։

Յիսուս աւելի մեծ հաւատ գըտաւ հեթանոս հարիւրապետի՝ քան հրէից մէջ, Սրա համար էլ նրա ծա-

ռային չը տեսած բժշկեց, և Նային քաղաքն գնալով այրի կնոջ մեռած միամօր որդուն կենդանացրուց, երբ թաղելու էին տանում։

Յովհաննէսի ուղարկած մարդիկը երբ Յիսուսի հրաշքները տեսան, Յիսուս նրանց ասաց որ գնան իրանց տեսածները Յովհաննէսին պատմեն, Յիսուս Յովհաննէսի համար վկայեց որ՝ մարգարէներից առաւել է, և կանանց ծնածներից ոչ ոք չի համեմատուի նրան, յանդիմանեց հրէից՝ որ ոչ Յովհաննէսի, և ոչ իւր քարոզութեամբ ապաշխարեցին։

Սիմէոն անունով փարիսեցի մէկը Յիսուսին ճաշի հրաւիրեց, նրա սան մէջ, մեղաւոր կինը մի շիշ պատուական իւղով Օծեց Ցիրոջ ոտները, այս մասին Յիսուս փարիսեցու թերահաւատութիւնը փարատեց՝ զղջացող

կնոջ ապաշխարութիւնը ցոյց տալով՝ նրա մեղացը թողութիւն տուեց։

Ը.

Փրկչոջի հեթանոս կանայքը Աստուծոյ խօսքի սերմերը, նորաղքանները, ծովը քարոզելը և բժշկութիւնները։

Յիսուսի բժշկած կանանցից մի քանիսը՝ իրանց ստացուածքով ծառայում էին նրան։ Յիսուս պատմեց սերմանողի և ցրտի տարին, խնուած բազմութեանը յայտնեց՝ թէ ո՞վ է իւր մայրն ու եղբայրները։ Սատանեց հողմերին և մէկ մարդուց դեւերի բազմութիւնը դուրս հանելով թոյլ տուեց դեւերին որ խոզերի երամակը մտնեն։ Գերգեսացիները չընդունեցին

ծրան։ Յիսուս տեռատես կինը բըժշ-
կեց, և Յայրոսի մեռած աղջիկը կեն-
դանացրուց։

Թ.

Քրիստոսի փառներին Առաքելները,
Հերովդէսը, հինգ հազար մարդիկն
կերակրելը, ծրա աշակերտները և հեթ-
անոսների խաչը, կերպարանափոխ լե-
ռելը, ոգեղէրտաց քարոզիչ-ը
և նախանձը։

Յիսուս իւր աշակերտաց ու-
զարկեց հրաշքներ անելու և քարո-
զելու։ Հերովդէս զարմանալով լսում
էր Յիսուսի գործքերն և ցանկանում
էր ծրան տեսնել։ Յիսուս հինգ հազար
հոգի կերակրեց հինգ հացով և երկու
ձկով։ Առանձին մի տեղում հարցրուց
իւր աշակերտաց թէ՝ մարդիկ իրան
ով են կարծում։ Այս մասին Պետրոսի

դաւանութեան ժամանակ պատուիրեց որ, ոչ ոքի չասէն թէ ինքը Աստուծոյ որդի Քրիստոսն է. իւր չարչարանքը նախաձայնեց, ամենին պատուէր տրուեց որ իւր օրինակին հետևին։

Թափոր լեառը բարձրացաւ Յիսուս իւր երեք աշակերտաց հետ, և նրանց ներկայութեան այլակերպեցաւ, ուր Մովսէս և Եղիա երևալով խօսում էին Քրիստոսի հետ նրա չարչարանքների մասին։ Պետրոս խնդրում էր վրանաբնակ մնալ այնտեղ, բայց լուսաւոր ամպը ծածկեց նրանց, և ամպից ձայն եկաւ թէ, «Դա է իմ սիրելի որդին, դրան լսեցէք»։

Երբ սարից իջաւ Քրիստոս՝ բժշկեց լուսնոտին, դարձեալ իւր չարչարանքը նախաձայնեց աշակերտացը, պատուիրեց որ խոնարհ լինին, ամենքի հետ քաղցրութեամբ վարուին՝ վրէժ-

խնդրութիւն չունենան, քանի մի անձինք կամեցան Քրիստոսին հետևիլ, բայց զրկուեցան իրանց աշխարհասէր լինելուն համար։

Ժ.

Քրիստոսի եօթանասուն երկու աշակերտացին, ուղարկեց Մարիամ և Մարթան։

Յիսուս իւր եօթանասուն երկու աշակերտացը երկու երկու ուղարկեց իսրայէլի բոլոր քաղաքները հրաշագործութիւն անելու և քարոզելու, պատուիրեց նրանց որ խոնարհ լինին և յայտնեց թէ ինչ բանի համար պէտք է ուրախանան, շնորհակալ լինին Հօրը՝ նրա պարգևած շնորհաց համար, և երանութիւն տուեց իւր

աշակերտացը, նրանց երջանիկ վիճակի մէջ լինելուն համար։

Յիսուս օրինապահ մարդուն ցոյց տուեց թէ, ի՞նչպէս կարողէ նա յաւիտենական կեանքը ժառանգել, կոշտոպտուած ու վիրաւորուած ճանապարհորդի առակով հասկացրուց նրան՝ փրկուելու միջոցը։

Եւ եկաւ մարթայի տունը, որի քոյր մարիամը Փրկչի խօսքերը լսելու համար տնական պարապմունքը թողած ունկնդիր էր լինում, մարթան այդ մասին տրտնջաց իւր քրոջ վրայ, բայց Փրկիչը մարթային հասկացրուց որ մարմնոյ պէտքերի համար չըպէտք է հոգւոյ պէտքերը թողնել։

ԺԱ.

Քրիստոսի իւր աշակերտացը աղօթանել սովորեցրուց, և պատուիրեց Աղօթել ասէ, այսպէս «Մեր Հայր քո անուանդ սուրբ լինի՝ քո արքայութիւնդ գայ, մեր ամեն օրուան հացը օրէց օր տուր մեզ, եւ մեր մեղքերը, թող մեզ, ինչպէս որ մենք էլ թողում ենք այն ամենին՝ որ պարտական են մեզ, և մեզ փորձանքի մէջ մի ձգիր»։

Եւ օրինակ բերեց գիշեր ժամանակ եկած հիւրի համար՝ գրացուց ստիպմամբ հաց փոխ առնելու միջոցն, և

հասկացրուց որ երկնաւոր Հայրն է իրանից խնդրողների խնդրածները կըկատարէ հարկաւոր դէպքերում։

Եւ մի համբից դեռ հանելով՝ յանդիմանեց հայհոյիչ փարիսեցւոց, և ցոյց տուեց ժողովրդոց թէ՝ որոնք են երանելիներն, արհամարհց ու վայ կարդաց փարիսեցւոց, դպրաց և օրինապահ կարծուած կեղծաւորներին, արքայութեան ճանապարհը մարդկանց առաջ դժուարացնելու համար։

ԺԲ.

Քրիստոսի՝ աշակերտաց պատուէրը։

Յիսուս պատուիրեց իւր աշակերտաց, կեղծաւորութիւնից զգուշ կենալ, և չը վախենալ իւր վարդապե-

տութիւնը քարոզելուց, մեծամեծ ամբարներ շինել մտածող Հարուստի առակով՝ պատուիրեց որ զգոյշ լինին ագահութիւնից, և ասաց, նախ՝ հոգւոյ հոգսը քաշելու է, իսկ մարմնոյ պէտքերը արդէն պատրաստ է չափաւորութեամբ, ինչպէս բնական կերպով ապրում են թռչուններն և ճնում բոյսերն, այլ Աստուծոյ թագաւորութիւնը խնդրեն, ողորմութիւն տան, և պատրաստ լինին յաւիտենական կենաց համար, որ երբ Տէրը գայ և դուռը բաղխէ իսկոյն ևեթ բանան։ Հաւատարիմ տնտեսի օրինակին հետևին, իրանց յանձնուած պաշտօնը արթնութեամբ կատարեն, որ չըլինի թէ անհաւատարիմ ծառայի նման պատժուին։

Յիսուս հասկացրեց նրանց իւր աշխարհ գալու պատճառը որ եկելէ, իբ-

բեւ կրակ բորբոքումէ երկրի վրայ, և Հօր Աստուծուց իրան յանձուած Հոգ-սերը կատարելուն շտապումէ իւր չարչարանքովը և յայտնեց Հաւատացեալ և անհաւատ ծնողաց, եղբարց մէկ մէկուց ապագայում բաժանուիլը, և զգուշացրեց՝ որ յաւիտենական տանջանքի չը մատնուին։

ԺԳ.

Քրիստոսի ապաշխարութիւն քարոզելը և այլ պատահարները։

Յիսուս գալիլեացւոց և ուրիշների կրած պատիժները օրինակ բերելով ապաշխարութիւն էր քարոզում որ չը կորչին։ Եւ պատմեց անպտուղ թզենու առակը, և այգեպանի խնամքը։ Ժշկեց բոլորովին շարժուիլ չը կարո-

գացող կնոջը։ Մանանէէ հատի և խմբէ առակով ցոյց տուեց ճշմարտութեան խօսքի զօրաւոր ներգործութիւնը։ իւր ընտրեալներին խրատեց աշխարհի նեղութեան համբերել՝ յաւիտենական ուրախութեան յուսով։ և յանդիմանեց Հերովդէսին աղուէս կոչելով, և վայ կարդաց Երուսաղէմին և նրա կործանումը նախաձայնեց։

ԺԴ.

Քրիստոսէ հիւր գնալը, ընդրէաց տասնը, նրան հետևողներէ անյուսացողներ։

Յիսուս մի շաբաթ օր մի փարիսեցի իշխանի տանը հաց ուտելու ժամանակ բժշկեց մի ջրգողեալ մարդու, սովորեցրուց խոնարհ լինիլ։ և աղ-

քատներին ճաշի հրաւիրել և ոչ թէ մեծամեծներին. և ճաշ տուողին էլ առակով հասկացրուց թէ՝ աշխարհատէր անձինք՝ որ Աստուծոյ խօսքերը անարգում են, դուրս պիտի մնան երկնքի արքայութիւնից։

Նաև ասաց, իրան աշակերտել ցանկացողները պէտք է որ յառաջագոյն խորհին, որ իրանց խաչը (չարչարանք.) պիտի կրեն, որ չըլինի թէ յետոյ ամօթալից եղանակով յետ քաշուին իրանից, և բոլորովին անպիտան լինին աշխարհի համար էլ, համը կորցրած աղի նման։

ԺԵ.

Քշիապուէ պապմաշ էրշաշ ուշիաշն ու քրամը և անուսուէ ուշշին.

Ցիսուս իւր քարոզութեամբ մեղաւորաց դարձը ցոյց տալու համար ասաց՝ հետևեալ առակները. ով է ձեզանից այն մարդը որ ունենայ հարիւր ոչխար, նրանցից մի հատը կորցնէ, մի թէ չի թողնէ իններսուն ինը անապատում և չի գնայ ու մանգայ կորածը գտնելու. եւ երբ գտնի ուրախանալով իրա ուսերի վրայ կը դնէ ու տուն կը դառնայ, աւետիք կը տայ բարեկամներին ու դրացիներին կորածը գտնելու համար։

Եւ կամ ո՞րպիսի կին կը լինի նա, որ ունենայ տասը դրամ որ երբ մի դրամը կորցնէ ճրագ չը վառէ և տու-

նը աւելելով չը փնտրէ կորցրածը մինչև որ գտնի, և երբ որ գտնի, բարեկամներին ու դրացիներին կը կանչէ աւետիք կը տայ՝ որ ուրախանան իրա հետ, կորածը գտնելու համար։ Մի և նոյն ուրախութիւնն է կատարվում երկնքում Աստուծոյ հրեշտակաց առաջ, երբ մէկ մեղաւոր ապաշխարում է։

Մարդկային պատուհրանագանց ըլնութեան, մեղաց թողութեան համար Փրկիչը հետևեալն ասաց։

Մէկ հարուստ մարդ, ունէր երկու որդի։ մի օր փոքր որդին ասաց հօրը «Հայր քո հարստութիւնից իմ բաժինը տուր»։ Եւ հայրն էլ տուեց նրա բաժինը։

Քիչ ժամանակից յետոյ փոքր որդին հաւաքեց բոլոր ունեցածը ու գնաց հեռու աշխարհ։

Այնտեղ նա վառնեց բոլոր ունեցածը անառակ կեանք վարելով, եւ քիչ ժամանակից աղքատացաւ։ Այդ միջոցին այն աշխարհում սով ընկաւ։ Նա մի մարդու մօտ մտաւ նրա խոզերը արածացնելու, սովը այնքան ուժգնացաւ՝ որ նա խոզերի կերակուրներից էլ անգամ ցանկանում էր ուտել։

Ցանկարծ նա խելքի եկաւ, միտքը բերեց որ իւր հօր տանը շատ ու շատ ծառաներ կուշտ փորով ապահով ապրում են, իսկ ինքն սովից մեռնում է։ Նա յոյս դնելով իւր հօր գթութեան վրայ, ինքն իրան ասաց։ գնամ հօրս ոտներն ընկնեմ ու ասեմ։ Հայր մեղաւոր եմ Աստուծոյ և քո առաջ։ Հայր էլ արժանի չեմ քո որդի կոչուելու, ազատում եմ քո ծառաներից մէկի տեղ համարիր ինձ։։ Այս մա-

քով վերկացաւ գնաց իւր հօր տունը։ Հայրը որ տեսաւ որդու կատարեալ զղջումը, դուրթը շարժեցաւ, առաջ գնաց, փաթաթուեցաւ և համբուրեց։ Որդին ծունկ չոգեց և ասաց. «Հայր, մեղաւոր եմ Աստծու և քո առաջ, էլ արժանի չեմ քո որդի ասուելու»։ Հայրը մոռացաւ ամէն բան, ներեց և հրամայեց ծառաներին որ նոր հանդերձներ հագցնեն, մատանի դնեն մատին և կոշիկները ոտքերը և պարարտ եզը մորթել տուեց և սկսեց ուրախանալ. հարևանների հետ, որովհետեւ իւր այդ որդին մեռած էր կենդանացաւ կորած էր եւ գտնուեցաւ։



ԺԶ.

Անէքա՝ պնդէ՝, Մեծապան և ջաղաքաւոր տուն

Յիսուս իւր աշակերտաց ապագայում ստանձնելու առաքելութեան բարձր պաշտօնի համար ասաց հետևեալը.

Մի հարուստ մարդ մի տնտես ունէր, նրա համար գանգատ էր լսում, որ վատնում է իրա հարստութիւնը, կանչեց նրան ու ասաց։ «Ինչ եմ լսում քեզ համար, տուր հաշիւդ, էլ այսուհետև տնտես չես կարող լինել»։

Տնտեսը իւր մտքի մէջ մտածելով ասաց, տէրս ինձ տնտեսութիւնից հանում է, գործ գործել չեմ կարող, մուրալ ամաչում եմ, գիտեմ, ինչ կանեմ, որ երբ տնտեսութիւնից հեռա-

ծամ, ուրիշները ինձ իրանց տներում ընդունեն։ Եւ իւր տիրոջ պարտականներին մէկ մէկ իւր մօտ կանչեց, ով որ Հարիւր չափ ձէթ պարտք ունէր՝ պարտամուրհակում յիսուն գրել տուեց, և Հարիւր խալվար ցորենի պարտք ունեցողին՝ ութսուն։ Տէրը լսելով գովեց անիրաւ տնտեսի իմաստութիւնը։

Յիսուս՝ արքայութեան և դժոխքի մասին գաղափար տալու Համար ասաց և Հետևեալը։

Մի Հարուստ մարդ կար, որ շատ ագնիւ ծիրանի և բեհեզ էր Հագնում և ամէն օր զուարճանում։ Մի աղքատ մարդ էլ կար անունը Ղազարոս, որ նրա դրան մօտ ընկած էր վերքերով լիքը, որը ցանկանում էր Հարուստի սեղանի փշրանքներից իւր սովածութիւնը կշտացնել։ Շներն էլ գալիս և

լիզում էին նրա վերքերը, և երբ մեռաւ աղքատը, հրեշտակները տարան նրան Աբրահամի գիրկը։

Հարուստն էլ մեռաւ եւ թաղուեցաւ, և տեսաւ ինքն իրան դժոխքում տաջանքների մէջ, աչքերը բարձրացրուց և հեռուից տեսաւ Աբրահամին և Ղազարոսն էլ նրա գոգումը և աղաղակեց, «Հայր Աբրահամ ողորմի ինձ և ուղարկիր Ղազարոսին, որ իւր մատի ծայրը թաց անէ ջրի մէջ և պապակուած լեզուս զովացնէ։»

Աբրահամ պատասխանեց, «որդեակ մի՛տդ բեր որ դու կեանքիդ մէջ ստացար քո վայելչութիւնը, Ղազարոսն էլ չարչարանքը, այժմ սա այս տեղ պէտք է մխիթարուի, իսկ դու այդ տեղ տանջուիս։»

Մեծատունը նորից ձայն տուեց, «աղաչում եմ քեզ հայր, որ դրան ու-

զարկես հօրս տուն այն տեղ հինգ եղբայր էլ ունիմ, թող նրանց պատուիրէ որ չը լինի թէ նրանք էլ գան այս տանջանքի տեղը»։

Աբրահամ ասաց, «նրանք ունին Մովսէսի և ուրիշ մարգարէների գրքերը, թող կարդան և իմանան»։

Մեծատունը դարձեալ ասաց. «ոչ հայր Աբրահամ, եթէ մեռելներից մէկը գնայ նրանց մօտ և քարոզէ՝ կապաշխարեն»։

Աբրահամ պատասխանեց, «Եթէ մարգարէների խօսքին ականջ չեն դնի, մեռելներից մէկն էլ որ գնայ, նրան էլ չեն հաւատայ։»

ԺԷ.

Քրիստոսի յոյսերը, Գայլակերեան, Նէրսէսեան, հաւատքի և Առաքելական աշխարհաբեան մասին։

Յիսուս սովորեցրուց որ գայթակղութեան պատճառ չը լինինք, միմեանց յանցանքը ներենք, հաւատքի զօրութիւնը յայտնեց, և սովորեցրուց՝ որ մարդիկս պարտաւոր ենք միշտ Աստուծոյ պատուէրները կատարելու՝ ինչպէս ծառայն պարտաւոր է իւր տիրոջ հրամաններն լսելու և կատարելու, բժշկեց տասն բորոտներին, Աստուծոյ թագաւորութիւնը և մարդոյ որդւոյ գալուստը նկարագրեց։

ԺԸ.

Քրիստոսի պատմելը անիրաւ դատաւորի, փարիսեցու և մաքսաւորի առակը և հարստահարեան վարանքը։

Յիսուս պատմեց թէ ինչպէս որը և այրու թախանձելովը անիրաւ դատաւորը դատաստան է տեսնում, և Մաքսաւորը՝ի սրտէ զղջալով արդանում է, իսկ Փարիսեցին անբարտաւանութեամբ աղօթելուն համար, անվարձ է մնում։

Երբ մանր տղայք Յիսուսի մօտ բերին, նրա աշակերտները թոյլ չէին տալիս, բայց նա ընդունեց նրանց և Աստուծոյ արքայութիւնը նրանց սեփականացրուց։ Մէկ իշխան կամեցաւ Քրիստոսին հետևիլ, բայց իւր հարստութիւնը արգելք եղաւ։

Քրիստոս իւր համար՝ իրանց ուներ-
ցածները թողնողներին վարձք խոս-
տացաւ։ Եւ նախաձայնեց իւր մահը,
և երիքովի ճանապարհի վրայ իւր
ետևից աղաղակող կոյրի աչքերը բա-
ցեց։

ԺԹ.

Քրիստոսի իրաւքը, Զաքէոսը, քառն
ճառանի տուակը, Երուսաղէմ հասնելը,
և քառնարը հաւքելը։

Յիսուս կորածը գտնելու համար,
հրէից մէջ մեղաւոր համարուած Զա-
քէոս մաքսապետին ժանտաթգենու
վրայից իւր մօտ կանչեց, և նրա
տանը իջևանեցաւ, նրա գղջալը տես-
նելով, փրկութիւն շնորհեց նրա
տանը։ Եւ պատմեց տան մնասի
առակը։

Քրիստոս էշի վրայ հեծած՝ փառաւոր հանդէսով Երուսաղէմ մտաւ, քաղաքի վրայ ողբաց, տաճարից դուրս հանեց գնողներն և վաճառողներին, ասելով գրուած է, իմ տունս աղօթքի տուն պիտի լինի, և դուք դրան աւազակների բուն էք արել, և ամէն օր տաճարի մէջ սովորեցնում էր, իսկ հրէից գլխաւորները կամենում էին կորցնել նրան, բայց ժողովրդից վախենում էին։

Ի.

Քրիստոսի իշխանութիւնը, այդպէս ասելը, կայսրի հարկ տալը, մեռելից յարութիւնը, տուն ուրի կոչելը, դպիրներից ձգուանալը պարտէրը։

Յիսուս Յովհաննէսի մկրտութեան հարցով իւր իշխանութեան

իրաւունքը պաշտպանեց, և պատմեց այգեւոյ առակը, պատասխանեց իրան փորձել կամեցող կարդացողներին և Քահանայապետներին՝ կայսեր տուրք տալու մասին։ Եւ յարութիւն չըկայ ասող սադուկեցւոց պապանձեցրուց։ Աշակերտներին պատուիրեց փառասէր զպիրներից զգուշ մնալ, որոնք դատապարտութեան արժանի են։

ԻԱ.

Քրիստոսի գովելը գանձանակում երկու լումայ ձգող աղքատ որբ և այրուն, որովհետև նա իրա բոլոր ապ-

բուստը ինչ որ ունէր ձգել էր Աստուծոյ ընծաների մէջ։

Յիսուս երբ գովասանք լսեց տաճարի գեղեցիկ շինուած ու զարդարուած լինելու մասին՝ նախաձայնեց տաճարի և Երուսաղէմի կործանումը, նաև յայտնեց վերջին օրուայ նշանները, յորդորեց որ արթուն լինինք, աղօթք անենք, որ ազատ մնանք բոլոր գալու փորձանքներից. իսկ ժողովուրդը առաւօտները վաղ գնում էր տաճարը նրանից բան լսելու։

ԻԲ.

Քրիստոսի մատնիչը, պատերազմ եւ ընդդիմութիւն, աշակերտաց փոքրոգութիւն։ Պետրոսի սրտնեղութիւն։

Հրեայք Քրիստոսի դէմ դաւադրութիւն արին, Յուդան Քրիստոսին մատնեց սատանայի դրդմամբ։ Առաքեալները պատրաստեցին զատիկը (Քրիստոսին ծածուկ հաւատացող մէկի վերնատան)։ Քրիստոս իւր սուրբ ընթրիքով սահմանեց հաղորդութեան սուրբ խորհուրդը։ Ընթրիքի սեղանի վրայ՝ մատնիչի ով լինելը յայտնեց առանց նրա անունը տալու։ Իւր աշակերտներին՝ փառասիրութիւնից զգուշացրուց, Պետրոսին յայտնեց թէ՝ իւր հաւատքը չը պիտի պակասի, բայց երեք անգամ պիտի

ուրանայ իւր Տէրը, իւր Առաքեալ-
ներին պատուիրեց սուր կրել, և
իրա համար ասաց որ ինքը անօրէն-
ների կարգը պիտի դասուի. Աղօթք
արաւ գեթսեմանեան պարտիզի մէջ,
առ Հայրն ծունր դրած, արիւն ու
քրտինք թափեց, հրեշտակ երևեցաւ
նրան երկնքից, և զօրացնում էր նրան.
աշակերտներին էլ պատուիրեց աղօթք
անեն որ փորձութեան մէջ չընկնին։

Եւ մինչ դեռ Յիսուս խօսում էր,
եկաւ այնտեղ ամբոխ և Յուդան, նը-
բանց հետ, և մէկ համբուրով մատնեց
իւր Տիրոջը. Յիսուսին բռնեցին. Պետ-
րոս Մաղքոսի ականջը կտրեց, Յիսուս
արգելեց սուր գործածել և Մաղքոսի
կտրած ականջը բժշկեց, Պետրոս երեք
անգամ ուրացաւ իւր Տիրոջը։ Քրիս-
տոս անտրգութիւն և չարչարանք
կրեց, և քահանայապետի հարցմանը

պատասխանեց թէ ինքը Աստուծոյ Որդի է։

ԻԳ.

Քրիստոսի ստրջրանքը Պիղատոսի և Հերովդէսի մօտ. խաչելը, մահն ու թաղումը

Յիսուս ամբաստանուեցաւ Պիղատոսի առաջ և Հերովդէսի մօտ ուղարկուեցաւ։ Հերովդէս ծաղրեց նը-բան, մի քանի հետ թշնամացած Հերովդէսն ու Պիղատոսը Յիսուսի առիթով բարեկամացան։

Պիղատոս արձակեց մարդասպան Բարաբբային, և Յիսուսին ծեծել տալով յանձնեց հրէից ձեռքը որ խաչուի ինչպէս որ նոքա կամենում էին։

Քրիստոս իւր վրայ լաց լինող կանանց յայտնեց Երուսաղէմի կործա-

նումը։ Ազօթք արաւ իրան չարչարող խաչողների համար, երկու չարագործ անձինք էլ նրա հետ խաչեցին, նրանցից մինը հաւատաց Քրիստոսին, որ և արժանացաւ լսել նրանից։ «թէ Այսօր ընդիս իցես ՝ի դրախտին։»

Քրիստոս մեռաւ խաչի վերայ իններորդ ժամին, թաղուեցաւ Յովսէփ Արեմաթացու պարտիզում քարից փորուած գերեզմանի մէջ, զոր Յովսէփ իւր համար էր պատրաստել։

ԻԴ.

Քրիստոսի յարութիւնը, երևալը և համբարձումը։

Յիսուսի յարութիւնը երկու հրեշտակներ աւետեցին գերեզման եկող խնկաբեր կանանց։ Նրանք ևս այս լու-

ը ուրիշներին պատմեցին. Քրիստոս
• երևաց Էմմաուս գիւղ գնացող եր-
կու մարդկանց, յետոյ առաքելոց, և
նրանց անհաւատութիւնը յանդիմա-
նեց, բացեց նրանց միտքը, որ Աստու-
ծոյ զօրութիւնը իմանան, տարաւ
նրանց մինչև Ձիթենեաց լեռը իւր ձեռ-
քերը բարձրացնելով օրհնեց նրանց,
տալով իշխանութիւն, և սուրբ Հոգ-
ւոյ գալուստը խոստացաւ, և ինքը
երկինք համբարձաւ։

ՀԱՄԱՌՕՏ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ՅՈՎՀԱՆՆՈՒ Ա. ԱՒԵՏԱՐԱՆԻ

Ա. Յովհաննէս առաքեալ և աւետարանիչ Յակոբ առաքելոյ փոքր եղբայրն (սրբանք Զեբեդիայի որդիքն էին). Սա գրեց իւր աւետարանը՝ Փրկչի երկինք համբառնալու յիսուն և երեքերորդ տարին՝ Յունարէն լեզուով՝ Եփեսոս քաղաքում՝ Ասիայի Եկեղեցւոյ խնդրելովը՝

Սա սկսեց բանին Ատուծոյ մարմնանալուց ասելով «և բանն մարմին եղև.» և պատմեց Յովհաննու մկրտութիւնը՝ աշակերտաց ընտրութիւնը՝ և այլ նշաններն ու արուեստները՝ աշխարհիս կատարածը՝ Մատնուիլը Պոնտացի Պիղատոսին և խաչուիլը՝ նրա հանդերձներն զինուրաց մէջ բաժանելը և պատմուճանի վրայ նրանց վիճակ ձգելը՝ Յիսուսի մարմինը գերեզմանի մէջ դրուիլը՝ Եւ երրորդ օրը յարութիւն առնելը և իւր աշակերտաց երևալը՝

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ս. ԱՒԵՏԱՐԱՆԻ

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԳԼ. Ա.

Մարմնացեալ բանը, Յովհաննէս Մկրտիչը, Յիսուսի առաջին աշակերտները.

Սկզբից էր բանը, գրում է Ս. Յովհաննէս աւետարանիչը. (այսինքն Աստուծոյ որդին.) և բանը Աստուծոյ մօտ էր, և բանը Աստուած էր, նրանով ստեղծուեցան բոլոր ստեղծուածները։ Աստուծուց ուղարկուեցաւ Յովհաննէսն, որ վկայէ ճշմարիտ լոյսի մասին, որը աշխարհ էր եկած, մարմին առած և մարդկանց հետ էր բնակւում, և իւր փառքը ցոյց տալիս՝ ինչպէս Հօր Աստուծոյ միածին որդի,

լքցուած շնորհքով և իմաստու-
թեամբ։

Աստծուն ոչ ոք չը տեսաւ, բայց
նրա միածին որդին՝ որ նրա ծոցումն
էր, նա պատմեց։ Երբ հրէայք Երու-
սաղէմից Յովհաննէսի մօտ քահանա-
ներ ու ղեւտացիներ ուղարկեցին հար-
ցընելու թէ «ի՞նքն է Քրիստոսը»։ Յով-
հաննէս պատասխանեց, որ ինքն ուղա-
րկուած է Քրիստոսի գալստեանը կա-
տարեալ լինելու. և թէ ինքը ջրով մկը-
տելու միայն իրաւունք ունի, իսկ
Քրիստոս Ս. Հոգւով պիտի մկրտէ։
Վկայեց Յովհաննէս թէ. «Ես տեսնում
էի որ Ս. Հոգին աղաւնոյ նման երկնքից
իջնում և հանգչում էր նրա
վրայ»։

Միւս օրը Յովհաննէս իւր երկու
աշակերտաց հետ տեսաւ որ, Յիսուսը
գնում էր՝ ասաց. «Ահաւասիկ Քրիս-

տոս Աստուծոյ գառը։ Այդ խօսքի համար Յովհաննէսի երկու աշակերտները Յիսուսի ետևից գնացին, գնացողներից մինը Սիմէօնի եղբայր Անդրէասն էր, որ իւր եղբայր Սիմէօնին էլ բերում էր Յիսուսի մօտ, Յիսուս Սիմէօնին կեփաս անուն տուեց, (որ Պետրոս է թարգմանվում)։ Հետևեալ օրը Գալիլեայից գուրս գալու ժամանակ, Յիսուս գտնում է Փիլիպպոսին և հրամայում է որ իւր ետևից գնայ։ Փիլիպպոս Նաթանայէլին ասում է. ահա սա է Քրիստոսը—Քրիստը և Մեսիան։

Նաթանայէլ զարմանում է, որ նազարէթցիներից մի բաքի մարդ է տեսնում։ Յիսուս Նաթանայէլի պարզամտութիւնն ու առաքինութիւնը տեսնելով գովեց նրան և յայտնեց իւր ծանօթութիւնը նրա հետ գերբնա-

կան կերպով։ Նաթանայէլն էլ հաւատաց Փրկչին և Աստուծոյ որդի դաւանեց նրան։ Յիսուս յայտնեց որ՝ նրանք այսուհետև պիտի տեսնեն երկինքը բացուած և Աստուծոյ հրեշտակները ելնելիս և իջնելիս մարդուորդւոյ վրայ։

Բ.

Փրիսպոսի ջուրը գինի փոխելը, և պատմաբը մատրէլը։

Յիսուս գալիլեայի Կանայ քաղաքում իւր մօր հետ հարսանիք էր հրաւիրուած, որտեղ առաջին հրաշքը ցոյց տուեց իւր մօր խնդրելովը՝ ջուրը գինի փոխեց։

Եւ յետոյ գնաց Կափառնայում. ընկերեց քարոզել ապաշխարութիւն և

Աստուծոյ արքայութիւնը, և զատկի ուրնին գնաց Երուսաղէմ, և տեսաւ որ Աստուծոյ տաճարին պատշաճաւոր յարգանք չէին տալիս, այլ Աստուծոյ տունը դարձրել էին առուտուրի տեղ, և շինեց թոկից խարազան, և դուրս հանեց տաճարից՝ գընողներին և ծախողներին, և նախաձայնեց իւր մահը և յարութիւնը։ Տատերը նրա հրաշքները տեսնելով հաւատացին նրան, բայց ինքը՝ իւր անձը չէր հաւատում նրանց։

Գ.

Քրիստոսի խօսակցութիւնը Նիկոդէմոսի հետ, Յովհաննէս-Մկրտչի վկայութիւնը Յիսուսի համար։

Հրէից իշխան Նիկոդէմոսը. Յիսուսի մօտ եկաւ գիշերով երկնքի աբ-

քայութեան վրայ խօսելու, Յիսուս սովորեցրուց նրան, որ մարդկանց վերան ծնանիլ հարկաւոր է մկրտութեան միջոցով, որ երկնքի արքայութիւնը ժառանգեն. և յայտնեց Նիկոդէմոսին իւր Աստուածութիւնը, մարդկանց փրկութեան համար՝ Հօր Աստուծոյ խնամքը, իւր միածին որդին աշխարհ ուղարկելը, և ով որ հաւատայ Աստուծոյ Որդուն՝ նա փրկուած է, և նորա աշխարհ գալը ոչ թէ դատաստան անելու, այլ փրկութեան համար է, սակայն դատաստանը սրբանում է, որ լոյսը աշխարհ է եկել, բայց մարդիկ խաւարը լոյսից աւելի սիրեցին։ Չար գործողը լոյսին ատում է, և երբէք լոյսին չէ մօտենում, որ իւր պախարակելի գործքերը չը տեսնուին. իսկ ճշմարտասէրները լոյսին են մօտենում որ յայտնուին թէ Աստուծով գործուեցան։

Այս խօսքերից յետոյ՝ Յիսուս իւր աշակերտներով եկաւ Հրէաստան, շրջում և մկրտում էր։ Յովհաննէս ևս քանի որ բանդարկուած չէր մկրտում էր Յայնոնում։ Յովհաննէսի աշակերտների և հրէից մէջ, սրբուելու խօսք եղաւ, նրանք եկան Յովհաննէսին հարցրին, թէ «Վարդապետ ահաւասիկ նա մկրտում է, որի համար դու վկայեցիր և ամենքը նրա մօտ են գնում»։ Յովհաննէս պատասխանեց։ «Ոչ ոք իրանից չէ կարող մի այդպիսի գործ գործել՝ մինչև երկնքից նրան տրուած չը լինի, դուք արդէն գիտէք, որ ես նրա կարապետն եմ, ով որ հարսն ունի, փեսայն նա է, իսկ փեսայի բարեկամները միայն ուրախանում են նրա ձայնը լսելով։ ահաւասիկ այդ ուրախութիւնն որ իմ է կատարուած է, այսու հետև նա պէտ-

քէ աճի և ես նուազեմ, որովհետև Հայրը սիրում է Որդուն և ամեն բան նրան է յանձնել, ով որ նրան հաւատայ՝ յաւիտեան կապրի, իսկ չը հաւատացողները չեն ապրիլ, այլ Աստուծոյ բարկութիւնը կը մնայ նրանց վրայ»։

Դ.

Սամարացի կինը, Ներքուստ պրպտողի ոգեշնչելը։

Յիսուս իմանալով, որ փարիսեցիք լսել են իւր աշակերտներ ունենալը և մկրտելը, իւր աշակերտների հետ՝ Հրէաստանից Գալիլեայ գնաց, ճանապարհին հանդիպեցաւ Սամարացւոց

*) Սուքար քաղաքի ջրհորի մօտ, սամարացի մի կնոջ և նրա հետ խօսեցաւ, ջուր խնդրեց և եկած մեսիայի մասին խօսք բացեց, և գուշակութեամբ կնոջ հինգ մարդ փոխելը յայտնեց, որով՝ թէ կինը և թէ սամարացիներից շատերը հաւատացին Փրկչին, ուր երկու օր մնաց։ Աշակերտները զարմացան որ Փրկիչը Սամարացի կնոջ հետ խօսեցաւ։

Յիսուս իւր աշակերտացը պարզաբանեց իրանց առաքելութեան պաշտօնը, որ իրանք իբրև մշակներ հասունացած հունձերը քաղելու համար

---

*) Հրէայք, Սամարացւոց հետ թէպէտ հաւատակից էին, բայց հերետիկոս էին համարում և շատից գուրս ատում էին միմեանց. և ողջոյն չէին տալիս, մէկ ամանից կերակուր ուտել և կամ մէկ սափորից ջուր խմելը՝ մեծ յանցանք էին համարում։ Հրէայք պնդում

են։ Քրիստոս կրկին Գալիլեայի կանա քաղաքը գնաց, և բժշկեց ազնուականի որդուն ասելով թէ «երթ, որդին քո կենդանի է»։

Ե.

Քրիստոսի Բեթհեսդա աւազանի մօտ հիւանդին բժշկելը, և Անտանանը վէճը։

Յիսուս իւր քարոզութեան երկրորդ տարին կրկին գնաց Երուսաղէմ

էին որ Երուսաղէմից դուրս Աստուծոյ պաշտօն մատուցանել չէ կարելի։ Սամարացիք Գարիզիմ լեռան վրայ զոհ մատուցանելու սովոր էին։ և հարիւր տարի կը լինէր որ այս առիթով երկու հաւատակից հրէից մէջ վիճաբանութիւն էր շարունակվում։

շաբաթ օրը, բեթհեզդա Պրոպատիկէ աւազանի սրահում երեսուն և ութ տարուայ անդամալոյծին բժշկեց, ցոյց տալով Փարիսեցւոց թէ՝ բարի գործքերը թոյլատրուած է շաբաթ օրումն էլ կատարել, հրէից կարգացողները սրա համար շատ զայրացան ու տրտնջացին Քրիստոսի վրայ, որ ուզում էին հալածել նրան։

Յիսուս այս հրաշագործութեամբ Փարիսեցւոց յայտնեց որ՝ ինքը Աստուծուց է ուղարկուած, Աստուածային զօրութեան յատուկ հրաշքներ գործելու համար, և մարդիկ պէտք է հաւատան իրան, և պաշտեն երկնաւոր հօրը։ Մեռելոց յարութեան, վերջին դատաստանի, և իւր երկրորդ գալստեան համար խօսեցաւ։ Իւր Աստուածութեան մասին Յովհաննէսի վկայութիւնն յիշեցրուց, և յայտնեց

որ ինքը՝ իբրև Աստուած գիտէ հրէից թերահաւատութիւնը իւր Աստուածութեան մասին, որի համար ոչ թէ ինքը, այլ նախամարգարէն Մովսէս եւ չարախօսւում է Հօր Աստուծոյ մօտ, որի համար հրէայք թերահաւատեցան այն ժամանակ, ինչպէս եւ այժմ Փրկչի համար։

Զ.

Քրիստոսի հինգ հազար մարդկանց կերակրելը, և ծովի վրայ գնալը և փարոշելը։

Յիսուս Տիբերեայ ծովի մի-ւ կողմը գնաց և շատ ժողովուրդ նրա յետևից գնում էին որ հրաշք տեսնին, նա բարձրացաւ լեռը նստաւ այնտեղ իւր աշակերտաց հետ, հրէից զատիկն

էր մօտ էր, Յիսուս տեսնելով ժողովրդոց բազմութիւնը Փիլիպպոսին փորձելու համար ասաց թէ՝ ո՞ր տեղից պէտք է գնենք այն քան հաց, որ այսքան ժողովուրդն ուտեն։

Ապա Յիսուս հինգ հազար հոգի կերակրեց, հինգ հացով և երկու ձկով այն տեղումն։ այս սքանչելի հրաշքից յետոյ, Յիսուս նորից մի ուրիշ լեռ գնաց, որով հետև լսեց որ կամենում են իրան թագաւոր նստեցնել։ երեկոյեան պահուն աշակերտները իջան ծովափը, և նաւով քսան հինգ երեսուն փարսախ հեռացան ցամաքից, մթնելու միջոցին ծովը սաստիկ ալեկոծուեցաւ, Յիսուս ծովի վրայ մանգալով ինչպէս ցամաքի վրայ գնաց դէպի աշակերտաց նաւը, նրանք չը գիտենալով որ Յիսուսն է, սաբսափեցան, բայց Յիսուս պատասխանեց թէ,

«ես եմ». մինչ դեռ նրանք Յիսուսին նաւը ընդունելու վրայ էին, և ահա նաւը հասաւ իւր գնացած երկիրը։ Միւս օրը ժողովուրդը Յիսուսին մանէր գալիս. Յիսուս յայտնեց նրանց, որ ոչ թէ իւր երկնային խօսքերը լսելու համար են ուզում իրան, այլ հրաշքով հաց ուտելու համար. որոնց պատուիրեց հոգեւոր կերակուր ունենալ. ապագայում իւր սուրբ հաղորդութեան փրկարար մեջոցը յայտնեց ասելով, որ երկնքից իջած կենդանի հացը ինքն է, ոչ թէ անապատի մանանայն որի ուտող հայրերը մեռան, այլ ասաց. «Ով որ իմ մարմինը ուտէ և արիւնը խմէ յաւիտեան պիտի ապրի»։ Աշակերտներից շատեր այս խօսքերը չհասկանալով նրանից հեռացան։ Յիսուս գիտենալով որ այս խօսքերի համար աշակերտաց մէջ տրտունջ կայ,

պարզաբանեց իւր խօսքը հասկացնելով որ, իւր ասածը հոգի է ու կեանք, որովհետեւ ճանաչում էր, թէ որո՞նք պիտի աշակերտեն և ո՞վ պիտի մատնէ իրան։

Պետրոս բոլոր աշակերտաց դաւանութեամբ Քրիստոսին Աստուծոյ որդի դաւանեց։ Յիսուս ընտրեց տասներկու աշակերտ. և սկսիրովտացու համար ասաց որ սատանայ է և իրան պիտի մատնէ։

Է.

Քրիստոսի Եղբայրների անհաստատությունը, նրա փորձը, խղճի դատի գաղափարը, և նիկոդեմոսի պաշտպանելը։

Յիսուս չէր կամենում այնուհետև հրեաստանում պտտիլ, որովհետև հրեայք ուզում էին սպանել նրան, բայց տաղաւարահարաց տօնի առթիւ իւր եղբայրները աշակերտներ և հաւատացողներ ստիպում էին որ գընայ Երուսաղէմ, սակայն Փրկիչը հրէից վրէժխնդրութիւնը գիտենալով, չըկամեցաւ, որ որոշեալ ժամանակից առաջ իւր փառքը յայտնէ, բայց զատկի կիսին (չորրորդ օրը) ծածուկ գնաց Երուսաղէմ և տաճարում քարոզում

էր որ, իւր վարդապետութիւնը Աստուածանից է։

Նրա մասին ժողովուրդի մէջ զանազան կարծիքներ եղան, Փարիսեցիք բարկացան իրանց սպասաւորների վրայ, որ նրան չէին բռնել, ինչպէս որ իրանք պատուիրած էին նրանց. Նիկոդէմոս սկսեց յայտնապէս պաշտպանել Յիսուսին. որի համար էլ յանդիմանուեցաւ նա՝ նրա կողմը խօսելու համար։

Ը.

Քրիստոսի վէճը շնացող կնոջ մասին, վիճաբանութիւնն նրա անյի և պաշտօնի մասին։ անարգութիւնը և Աստուծուինը։

Յիսուս արձակեց շնութեան յանցանքով բռնուած կնոջը, դպրաց և

փարիսեցւոց առաջարկելով թէ՝ ո՞վ որ անմեղ է, թող նա առաջին անգամ քար ձգէ մեղապարտ ճանաչուած կընոջ վրայ։

Յիսուս յայտնեց թէ՝ ինքը աշխարհիս լոյսն է. և իւր վարդապետութիւնը արդարացրուց՝ Աբրահամի վրայ յոյս դնող և նրանով պարծեցող Հրէից պատասխանեց, նրանք էլ այս խոսքերից կատաղելով ուզում էին Փրկչին քարկոծել, բայց նա ինքն իրան պահպանելով հեռացաւ տաճարից։

Թ.

Քչքոտուած ՝ի ծնէ կոյրին բժշկելը։

Յիսուս իւր փառքը և Աստուածային զօրութիւնը ցոյց տալու համար ՝ի ծնէ կոյրի աչքերը բացեց, բայց

հրէայք իրանց նախանձասիրութեամբ տրտնջում էին՝ որ Փրկիչը շաբաթ օրը չը պահելով հրաշքներ է գործում մինչև որ բժշկուածի մասին կասկածներ եղաւ թէ նա կոյր ծնուածը չէ, մինչև որ բժշկուածի ծնողներին էլ Փարիսեցիք կանչեցին և ստուգեցին և ապա բժշկուածի վրայ բարկացան և ժողովարանից դուրս արեցին. բայց Յիսուս նրա հաւատը տեսնելով քաջալերեց, և նա էլ հաւատաց նրան. Յիսուս պախարակեց Փարիսեցւոց հոգւով կոյր լինելու համար։

Ժ.

Քրիստոսի յայտնաձ բարի հաղթը, նրա ուղիները և Մեսիան։

Յիսուս Հրէից տարբեր կարծիքը փարատելու համար իւր գործքերով ցոյց տուեց որ ինքն է Քրիստոսը. կենաց դուռը, բարի հովիւը, Աստծու Որդին և Մեսիան։

Յիսուս նաւակատիքի տօնին Երուսաղէմումն էր, և սողոմոնի տաճարի գաւթումն պտտում էր, Հրէայք հարցրին նրան թէ՝ ինքն է Քրիստոս Փրկիչը, նրանց պատասխանեց ցոյց տալով որ, Հրէայք իւր ոչխարներից չը լինելով չեն կարող հաւատալ իրան։

Յիսուս Աստծուն իւր հայր կանչելու համար Հրէայք կատաղեցան և

ուզեցին նրան քարկոծել, բայց նա անհետացաւ նրանցից և գնաց Յորդանանու միւս կողմը, այդ տեղում շատերը հաւատացին նրան:

ԺԱ.

Քրիստոսի յարութիւնը մեռելոցին:

Յիսուս յարութիւն տուեց բեթանիայում չորս օրուայ մեռած ու գերեզմանի մէջ դրուած Ղազարոսին. «Ղազարէ արի եկ արտաքս». կոչելովայս որ տեսան հրէաներից շատերը հաւատացին նրան:

Քահանայապետները և փարիսեցիք ժողով արին որ Յիսուսին սպանեն, կայիափան մարգարէացաւ և ասաց, լաւ է մի մարդ մեռանի քան թէ բոլորը

ժողովուրդը մեր դէմ ապստամբուին։

Յիսուս իւր անձը թաղցրուց նրանցից, Զատկի ուօնին ժողովուրդը փնտռում էր նրան, իսկ Քահանայապետները պատուիրած էին դպիրներին և փարիսեցւոց, որ երբ տեսնին Յիսուսին՝ իսկոյն բռնեն։

ԺԲ.

Քրիստոսի օծումը զաղտրոսի տոյգ մարիամից, Երուսաղէմ մտնելը, նրա մահուան պատրաստը. երկնից եկած յայտը, հրէից անհաւատութիւնը։

Յիսուս զատկից վեց օր առաջ Բեթանեայ գիւղումն էր, որտեղ հիւրընկալուած էր, ճաշի միջոցին Ղա-

գարոսի քոյր Մարիամը բերեց մի շիշ թանկագին Նարդոս իւղ և օծեց Փրկչի ոտները. թէպէտ մատնիչ աշակերտը տրտնջում էր թանկագին իւղի թափուելու մասին՝ ասելով թէ, լաւ էր որ ծախէին և գինն աղքատաց տային, ոչ թէ աղքատաց խնամք տանելու մտօք էր ասում. այլ արկղն իւր մօտն էր և գողանալու մտօք, բայց Փրկիչը ցոյց տուեց որ, այդ օծումը իւր պատանուելու նշանն է։ Ճաշի նստողներից մինն էլ Ղազարոսն էր. Տէրը գովեց Մարիամին՝ և Մարթան էլ ծառայում էր։ Ժողովուրդը եկաւ Բեթանեայ մեռելութիւնից կենդանացած Ղազարոսին տեսնելու։

Քահանայապետները խորհուրդ արին որ Ղազարոսին էլ սպանեն. Քրիստոս էշի վրայ հեծած փառաւոր հանդէսով Երուսաղէմ մտաւ, մի քա-

նի հեթանոսները՝ *) ցանկացան Նրան տեսնել։

Յիսուս ցանուած ցորենի օրինակով և իւր մահուամբ մարդկային մեռած բնութեան վերակենդանանալը յայտնեց, և սկսեց Հօր Աստծուն աղօթք անել որ իրան փառաւոր է երկրի վրայ՝ և երկնքից ձայն եկաւ թէ «պիտի փառաւորեմ»։ Լսող ժողովուրդը սարսափեցաւ և կարծում էր թէ որոտումն է լինում։ Եւ Հրէից կուրութիւնը թշնամանեց՝ իշխաններից

*) Մեր ազգային աւանդութեամբ՝ հեթանոս անուանեալները՝ Հայոց Արգար Թագաւորից՝ Յիսուսի մօտ ուղարկած պատգամաւորներն էին՝ որոց ձեռքով նոյն Թագաւորը Յիսուսին հաւատալն էր յայտնում և Նրան իւր մօտ էր հրաւիրում՝ որ իրան բորոտութիւնից բժշկէ և թէ ինքը Հրէից ձեռքից ազատուի։

(Խոր-գիրք՝ Բ՝ գլ՝ ԼԲ՝)

ղատերը հաւատացին Յիսուսին, բայց Փարիսեցիներից վախենալով չէին համարձակվում յայտնի դաւանել Նրան։

ԺԳ.

Քրիստոսի Խաչելութեան ոգին լուանալը, մատնչի ով լինելը յայտնելը, քահանայապետը և Պետրոսի սրբապղծելը։

Յիսուս իւր աշակերտաց ոտները լուաց, Նրանց հեզութեան օրինակ ցոյց տալով, յորդորեց Նրանց՝ որ խոնարհութեամբ և սիրով վարուին միմեանց հետ, և իւր օրինակին հետևին։

Եւ յայտնեց թէ, իւր աշակերտներից մինը իրան պիտի մատնէ, և պատառը թաց արաւ ու տուեց Իսկարիովտացի Յուդային, որով մատ-

նբչի ով լինելը յայտնեց. աշակերտաց-
ը պատուիրեց որ մինեանց սիրեն ինչ-
պէս որ ինքը իրանց սիրեց, և Պետ-
րոսին ասաց, որ այդ գիշերը մինչև
հաւախօսը իրան երեք անգամ պէտք է
ուրանայ։

ԺԴ.

Քրիստոսի վերջին խօսքերը է՝ աշա-
կերտաց հետ և Ս. Հոգւոյ խոստումը։

Յիսուս մխիթարեց իւր աշակեր-
տացը՝ երկնային երջանկութեան յոյսը
նրանց առաջը դնելով, և յայտնեց թէ՝
ինքը նրանցից անբաժան պիտի մնայ
մինչև աշխարհիս վերջը, և թէ ինքն՝ է
ճանապարհ, ճշմարտութիւն և կեանք,
և թէ ինքը՝ Հօրմատուծոյ հետ
մի է, խոստացաւ որ իւր անունով

եղած ամէն մի խնդրութիւնք և աղօթք կը կատարուի, պատուիրեց սէր և հնազանդութիւն ունենալ դէպի ինքը, և խոստացաւ նրանց, ուղարկել մխիթարիչ Ս. Հոգին, և իւր խաղաղութիւնը տուեց նրանց։

ԺԵ.

Քրիստոսի սէրը, և աշխարհի ատելութիւնը։

Յիսուս իրան որդի, Հօրը մշակ և աշակերտացը պտղատու ճիւղ անուանեց, և իւր անդամների մխիթարութիւնը և փոխադարձ սէրն՝ որդի առակով բացատրեց, իւր աշակերտացը մխիթարեց, նրանց իւր քարեկամ անուանեց ու ասաց, որ նրանք աշխարհիս ատելի պէտք է լինին և հալածուին. Սուրբը Հոգւոյ վկայութիւ-

նը և առաքելոց պաշտօնը բացատրեց, որ նրանք քիչ օրից յետոյ ճըշմարտութիւնը պէտք է քարոզեն։

ԺԶ.

Քրիստոսի մինիստրութիւնը. Ս. Հոգւոյ պաշտօնը, և գրքոյրնից յետոյ ուրախութիւն։

Յիսուս մտաբերեց իւր աշակերտացը նրանց կրելու նեղութիւնները, և մխիթարեց նրանց Ս. Հոգի ուղարկելու խօստմամբ, թէ մխիթարիչը կը գայ աշխարհքին կը յանդիմանէ, մեղաց, արդարութեան և դատաստանի համար, և իւր յարութիւնը և երկինք համբառնալը նախաձայնեց, հաստատեց թէ իւր Հայրը պիտի լսէ նրանց աղօթքը, ինչ՝ որ իւր անունով խնդրեն, և թէ՝ իրանով խաղաղու-

թիւն պիտի ունենան, թէև աշխարհիս մէջ նեղութիւն պէտք է կրեն, միայն թէ՝ ուրախ լինին, որ ինքը աշխարհին յաղթել է։

ԺԷ.

Քրիստոսի աղօթքը

Յիսուս աղաչեց իւր երկնաւոր Հօրը աղօթելով, որ փառաւորէ իրան, հաստատ պահէ իւր առաքեալներին սիրոյ, միութեան և ճշմարտութեան մէջ, և երկնքում իւր հետ փառաւորէ նրանց, տալով իսկզբաննէ աշխարհի իւր խոստացած բարիքները, և նրանց խօսքով, մինչև բոլոր իրան հաւատացողներին։

ԺԸ.

Քրիստոսի բռնությունը պարիսպներում, հարցափնությունը քահանայապետից, և Պիղատոսի առաջ և Պետրոսի ուրանալը։

Յուդան երբ մատնեց Յիսուսին, նրա առաջնորդությամբ՝ Յիսուսի վրայ եկած զինուորաց դունդը քահանայապետների և Փարիսեցւոց ըստասաւորները, կեդրոնեան ձորի միւս կողմի պարտիզում, երբ ուզում էին շրջապատել Նրան, Յիսուս ասաց. «ես եմ», բոլորն էլ գետնին խփուեցան։ Պետրոս սրով կտրեց մաղքոսի ականջը, բայց այն րոպէին Փրկիչը հրաշագործեց և ականջը ողջացուց, և Յիսուս իւր յօժար կամքովը բռնվուեցաւ, Նրան տարան Աննա Կայիափա-

յի առաջ, ուր Պետրոս իւր Տիրոջը ուրացաւ. Յիսուս քննուեցաւ քահանայապետի առաջ, և ապտակուեցաւ ծառայից՝ համարձակախօսութեան համար, և անբաստանուեցաւ Պիղատոսի առաջ. Պիղատոս հարցեր տուեց Յիսուսին Նրա թագաւորութեան և Նրա աշակերտաց մասին. Յիսուս էլ պատասխանեց իւր աշխարհ գալու պատճառը, որ եկած է ճշմարտութեան համար վկայելու. Պիղատոս չը կամեցաւ հասկանալ թէ ի՞նչ է ճշմարտութիւնը, բայց կամեցաւ Յիսուսին արձակել, որ ի պատիւ զատկի տօնին սովոր էին մի յանցաւոր ազատել, իսկ Հրէայք պնդում էին որ Բարաբբայն արձակուի, որ մի չարագործ մարդասպան էր։

ԺԹ.

Քրիստոսի ծեծուելը, Փշէ պսակը, Խաչուելը. մահը և թաղումը։

Յիսուսին ծեծեցին զինուորները, և Փշեայ պսակ դրին նրա գլխին, ծիրանի շոր հագցրին և երեսին ապտակներ հասցրին. Պիղատոս կամեցաւ ազատել Յիսուսին. բայց Հրէից ազաղակին զիջանելով և երկիւղ կրելով որ ազաղակում էին և ասում, թէ որ դրան արձակես՝ Կայսրէ բարեկամ չես։

Զատկի ուրբաթ օրն վեց ժամին Պիղատոս յանձնեց Յիսուսին Հրէից ձեռքը, որ իրանց օրէնքով՝ խաչեն նրան, Հրեայք տարան Յիսուսին Գողգոթայ և խաչեցին, և նրա հետ էլ

երկու ուրիշ չարագործներ՝ Պիղատոս տախտակի վրայ գրեց. «Յիսուս Նազովրեցի Թագաւոր Հրէից»։ Եւ Խաչի վրայ դրեց իբրև դատավճիռ։

Զինուորներն էլ Յիսուսի պատմուճանի վրայ վիճակ ձգեցին։

Յիսուս խաչի վրայից իւր մայրը Յովհաննէսին յանձնելուց յետոյ գոչեց «ծարաւի եմ». փոխան ջրոյ տուին քացախ լեղիի հետ խառնած, որանից յետոյ Յիսուս ամեն բան կատարուած համարելով՝ գլուխը խոնարհացրուց և հոգին աւանդեց։

Մի զինուոր Յիսուսի կողը խոցեց, իսկոյն արիւն և ջուր դուրս եկաւ։

Յիսուսի ծածուկ աշակերտ Արիմաթիացի Յովսէփը, աղաչեց Պիղատոսին, որ իրան տայ Յիսուսի մարմինը. Պիղատոսի հրամանով Յովսէփն ու Նիկոդէմոսը, իջուցին Յիսուսի

մարմինը խաչից և պատեցին մաքուր կտաւով, զմուռով և հալուէով, և թաղեցին պարտիզում՝ նոր փորած գերեզմանի մէջ։

Ի.

Քրիստոսի յարութիւնը և Հրեշտակաց յայտնութիւնը։

Միաշաբաթի առաւօտ վաղ լուսանալու մօտ. Մարիամ մագդալենացին Յիսուսի գերեզմանը գնաց, և տեսաւ որ քարը գերեզմանի դռնից վեր էր առած, հետևեցին նրան Պետրոս ու Յովհաննէս, չը գիտենալով թէ Քրիստոս յարութիւն է առած։ գերեզմանում գտան միայն կտաւները։ Երկու հրեշտակ գերեզմանի մի-

ջից աւետեցին Մարիամին Յիսուսի յարութիւնը։

Յիսուս երևաց Մարիամ մագթաղինացուն, և իւր աշակերտներին։

Թովմասը թերահաւատ մնաց՝ մինչի ութ օրից յետոյ՝ երկրորդ անգամ երևաց նրանց, Թովմասին էլ ցոյց տուեց իւր քեւեռների և տիգի խոցած տեղերը։ Թովմասն էլ այն ժամանակ հաւատաց, Տէր և Աստուած գաւանեց՝ Յիսուս էլ ուրիշ շատ նշաններ արաւ իւր աշակերտաց առաջ, որ բաւական են հաւատացեալներիս, Յիսուս Քրիստոս Աստուած և Աստուծոյ որդի գաւանելու, մեր հոգւոյ և մարմնոյ փրկութեան համար։

ԻԱ.

Քրիստոսի յայտնութիւնը Գալիլիայում Տիբերիայի ծովի մօտ, նրա մարգարէութիւնը Պետրոսի և Յովհաննէսի մասին։

Յիսուս դարձեալ իւր աշակերտացը երևաց երրորդ անգամ Տիբերիայի ծովի եզերքում, և շատ ձուկ բռնել տալու հրաշքով, աշակերտները ճանաչեցին նրան որ Տէրն է, և նա էլ նրանց հետ ճաշ կերաւ։

Եւ՝ ի վերջոյ պատուերներ տուեց ամենքին. և պետրոսին երեք անգամ ուրացութեան փոխանակ երեք անգամ պատուիրեց որ իւր գառներն ու ոչխարներն արածացնէ՝ Յովհաննէսի համար էլ ասաց. «Կամենում եմ ես, որ դա կենայ մինչև որ ես գամ» և յանդիմանեց Պետրոսին՝ Յովհաննէսի

մասին հետաքրքրութեանը համար։

Եւ Յովհաննէս գրուած է թէ՝ «Ուրիշ շատ բաներ էլ կան որ արաւ Յիսուս, որ եթէ բոլորն էլ գրուած լինէին, կարծուած եմ թէ՝ աշխարքս էլ բաւական չէր լինի տանելու, թէ որ գրուած լինէին»։



ՎԵՐՋԱԲԱՆ

Տէրն մեր Յիսուս Քրիստոս իւր վարդապետութեամբ ուսոյց մեզ, թէ երջանիկ է այն ազգը որ միայն հացով չէ ապրում, այլ աւետարանի փրկարար և երկնային հացովն է սնուցանում իւր հոգին և իւր ներքին աշխարհը։ Ասում էր հացը միայն մարմինն է սնուցանում իսկ աւետարանի ճշմարտութիւններն մարդուս միտքն ու սիրտն են պարարում և բովանդակ մարդկութեան հոգին ապրեցնում ու անմահացնում։

Յիսուս Քրիստոս ուսուցանում էր որ, Աստուած հոգի է, ուստի և պէտք է որ ճշմարիտ երկրպագուները հոգւով և ճշմարտութեամբ երկրպագանեն։ միայն ճշմարիտ և բարի Աստծուն, պէտք է սիրեն նրան յամենայն սրտէ, յամենայն անձնէ և յամենայն զօրութենէ։

Յիսուս Քրիստոս ուսուցանում էր՝ թէ Հայրն Աստուած գիտէ մարդկանց պէտքերը, հոգում է նրանց համար, լսում է նրանց աղօթքը թողնում է նրանց մեղքերը, և այն-

չափ սիրում է, որ իւր Միածին Որդին տրուաւ նրանց փրկութեան համար։ Իսկ իւր անձի համար ասում էր, որ ինքը ճշմարիտ Աստուծոյ Որդի է, մի և փառակից է Հօր հետ, և նրանից է աշխարհ ուղարկուած։

Ասում էր, որ իւր խօսքերը՝ Հօր Աստուծոյ խօսքերն են, և նրա պատուէրներն են, որ ինքը կատարում է երկրիս վրայ ճշմարտութեամբ, մարդկանց օգտի և բարօրութեան համար։ Եւ պիտի գայ միւսանգամ յարուցանել և իւրաքանչիւրին հատուցանել իրանց գործքերի համեմատ. միով բանիւ ասում էր, որ ինքն է մեր ԿԵՐԱԿՐԸ. մեր ԼՈՅԸ. մեր ՎԵՐՁԱԾԸ. մեր ՀՈՎԻՒԸ. մեր ՇՆՈՐՀԸ. ՀՇՄԱՐՏՈՒԹԻՒՆԸ. ԿԵԱՆՔԸ և մեր ԲԱՐԵԿԱՄԸ։

Եւ սուրբ Հոգւոյ համար ուսուցանում էր՝ թէ նա ճշմարտութեան Հոգի է, որ աշխարհս կարող չէ առանել, բայց պիտի գայ և մնայ իւր աշակերտաց հետ։ Պիտի թարգման լինի վարդապետութեան և ուսուցիչ ամենայն ճշմարտութեան. փառաւորիչ իւր փառակցին և նախատող աշխարհի, և առանց սուրբ Հոգւոյ օգնութեան և նորոգութեան հնար չըկայ։

դէպի լաւը վերափոխել աշխարհս։

Յիսուս Քրիստոս ուսուցանում էր մարդկային ազգի նախկին վիճակը, նրա անկումը նրա վերատին կանգնելու միջոցը, նրա վախճանը և պարտքը. նրա մոլորութեանց պատճառները և ակնկալութեան հաստատութիւնը. ասելով թէ՝ աշխարհս ագարակ է, որի մէջ Աստուծոյ կողմից ցանած է բարի սերմը, իսկ չարի կողմից՝ որոմը։ բայց բարին և չարն խառըն պիտի աճին մինչի հունձի ժամանակ (կատարած աշխարհի։) և այն ժամանակ պէտք է որոշուին ցորեան (բարին) Աստուծոյ շտեմարանում։ իսկ որոմն (չարն) կրակի հնոցում։

Յիսուս Քրիստոս ուսուցանում էր դարձեալ՝ թէ պարտականենք անշուշտ խոնարհ և անմեղ մանկան միտք ունենալ երկնային արքայութիւնը մտնելու համար։ Պարտական ենք մեր անձի տկարութիւնը ճանաչել, որէ հիմն ճշմարիտ մեծութեան։ Պարտական ենք Աստուծոյ ընտանի լինելու համար, սրտի սրբութեամբ խաղաղասիրութիւն ունենալ, որ նշան է Աստուծոյ որդիութեան։ Պարտական ենք ընկերին ողորմիլ որով Աստուծոյ գութը

կրգրաւենք։ Պարտական ենք Աստուծոյ սիրոյն համար համբերել հալածանաց։ որ է գրաւական մխիթարութեան Աստուծոյ և երկնքի երանութեան։

Յիսուս Քրիստոս ուսուցանում էր ևս՝ թէ եղբայրսիրութիւնն նրա աշակերտաց կնիքն է։ նրա պատուէրները ճիշտ կատարելն իրան սիրելու ապացոյցն է։ թշնամիներին՝ ի բոլոր սրտէ բարութիւն անելն՝ թշնամիներից կրած զրկանքների միակ և գեղեցիկ հատուցումն է։ եղբայր սիրութեան պատուերն հաւասար է Աստուածասիրութեան պատուերին։ առանց ցոյցի և փառասիրութեան առատ տուքն։ մարդկանցից անտես աղօթքն և զուարթ երեսաց պահքն։ գեղեցիկ պաշարներ են պահուած վերջին օրուայ համար։ որոց հատուցումն ստանալու ենք։

Յիսուս Քրիստոս ուսուցանում էր՝ թէ ցանկանալու նպատակով հայրենի՝ շնութիւն է։ ոխութիւնն՝ եղբայրասպանութիւն։ որով սիրան պղծութեան աղբիւր է դարձնում։ այլոց թերութիւնները խստիւ դատելն՝ մեր անձը դատաստանի ենթարկելը է նշանակում։ ասել

և չառնելն, լսել և գործ ջրգնելն՝ մեծ յիմարութիւն է, որպէս թէ մարդ իւր տան հիմն աւազի վրայ գրած չինի, դարձեալ թէ՝ թեթեւամտութիւնն է արծաթի և կերակրի վրայ սաստիկ հոգալն, առաքինութեանց սերմերն հեղձուցանող փուշեր են, Մեղքը՝ իսկապէս ծառայութիւն է և գերութիւն, չարագործութիւնն՝ որդիութիւն է սատանայի, որ իսկզբանէ մարդասպանէ, սուտ է և հայր սուտեան։

Ճշմարիտ սիրոյ անսպառ աղբիւր Յիսուս Քրիստոսը ուսուցանում էր՝ իւր աշակերտացը և նրանց միջոցով բոլոր հաւատացողներին թէ՝ քրիստոնէից սուրբ սիրով կրած ամէն վշտերը մշտընջենաւոր ուրախութեան երկունքներն են, և թէ՝ ճշմարիտ քրիստոնեայք աղօթքով կը կարողանան տանալ ամեն բան, ինչ որ Աստուծոյ կամաց համեմատ կը խնդրեն և կատարեալ վստահութիւն կունենան նրա վրա։ Քրիստոս իրան ճշմարիտ որդի էր նմանացնում և բարեբարոյ քրիստոնեաներին պտղաբեր բարունակների, այնպէս որ, նրա կամքը կատարողները կարժանանան նրա սիրոյն, բարեկամութեանը, աղգականութեանը,

երկնաւոր Հօր որդիութեանը և վերջն էլ հանգերձեալ կենաց մէջ կը վայելչանան։

Եւ Աւետարանի սուրբ սեղանոյն յետին պաշտօնեայս մարդկային քրիստոնէական և քահանայական պարտականութեան վրայեմ նպատակին ծառայելու քաղցր գաղափարով արժան դատեցի «Բոլանդակութիւն Ս. Աւետարանի» վերնագրով աւետարանի բոլոր գլուխներից համառօտ դասեր կազմել և հրատարակել կրօնասէր ժողովրդի և մանկանց ընթերցանութեան համար։ Հեղինակութեամբ ՀԱՅՐԱՊԵՏ Գ. ՆԻՇԱՆՅԱՆ Հայրենիք որ մեր ազգայինք են։ ոչ միայն կորստական կեբակրով այլ աւետարանական բանիւ յագենան, ապրին ու անմահանան։

ՅԱՆԿ

Յառաջաբան . . . . Ա.
Նախերգանք . . . . Է.

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ ՄԱՏԹԷՈՍԻ ԱՒԵՏԱՐԱՆԻ ԺԸ.

1 Քրիստոսի յղութիւնը ազգահամարը, անուանակոչութիւնը և ծնունդը . 1
2 Քրիստոսի յայտնութիւնը, մանկութիւնը և զարգացումը . . 2
3 Քրիստոսի մկրտութիւնը Յովհաննէսից. 4
4 Քրիստոսի փորձութիւնը և քարոզութեան սկիզբը . . . 5
5 Քրիստոսի քարոզը լերան վրայ, երանութիւնը և օրինաց մեղքը . 7
6 Աստուածպաշտութիւն, ողորմութիւն, աղօթք և պահք . . . 9
7 Քրիստոսի պատուէրները. չդատել աղօթք անել, սուտ մարգարէներից զգուշանալ, վիմի վրայ տուն շինել. 10
8 Քրիստոսի հրաշքները . . 11

9 Քրիստոսի Մատթէոսին կանչելը և հրաշագործութիւնները . . 12
10 Քրիստոսի տասներկու աշակերտները և նրանց տուած պատուերները . 13
11 Քրիստոսի մօտ ուղարկելը Յովհաննէսի՝ իւր երկու աշակերտներին . 15
12 Քրիստոսի յանդիմանական պատասխանը փարիսեցուց . . . 16
13 Աստուծոյ արքայութեան առակներն. 17
14 Յովհաննու գլխատումը՝ Քրիստոսի հինգ հազար մարդկանց կերակրելը՝ ծովի վրայ գնալը . . 20
15 Քրիստոսի աւանդութիւն յանդիմանելը՝ Քանանացի կնոջ դուստրը՝ չորս հազար մարդկանց կերակրելը . 21
16 Փարիսեցւոց նշան խնդրելը՝ նրանց խմորը՝ Պետրոսի դաւանութիւնը՝ Քրիստոսի չարչարանքը և նրան հետևողների խաչը . . . 22
17 Քրիստոսի կերպարանքի պայծառափոխ լինելը՝ լուսնոտը և երկդրամեանը. 23
18 Քրիստոսի յորդորական խրատներն ու պատուերները և ծառաներից հաշիւ

պահանջող թագաւորը . . 25
19 Կին արձակելու մասին. Քրիստոս երեխաներին օրհնելը և Հարստութեան վտանգը 26
20 Ույգում աշխատողները. Քրիստոսի շարշարանքը, աշակերտաց պատուասիրութիւնը . . . 27
21 Քրիստոսի Երուսաղէմ մտնելը, տաճարը մաքրելը, թզենին անիծելը, երկու որդւոց և չար մշակների առակները 28
22 Թագաւորի որդւոյ հարսանիքը, կոյսեր հարկ տալը յարութեան ապացուցանելը, առաջին պատուիրանքը . 30
23 Դպրաց և փարիսեցւոց վարքի յանդիմանութիւնը, Երուսաղէմի կործանումը 31
24 Տաճարի կործանումը և Քրիստոսի գալուստը 32
25 Տասն կոյսերը, քանքարների առակը վերջին դատաստանը . . 33
26 Քրիստոսի օծումը, Յուդայի մատնութիւնը. երեսուն արծաթը, Հաղորդութիւնը. աղօթելը, մատնուիլը և գա-

տաստանի տանուիլը . . 35
27 Քրիստոսի չարչարանքը Պիղատոսի առաջ փշէ պսակը, խաչելութիւնը, մահը և թաղումը . . . 37
28 Քրիստոսի յարութիւնը և հրամանները իւր աշակերտաց . . 40

Ը-Վ-Ն-Գ-Ի-Ն Մ-Ը-Ի-Ն Ա-Ռ-Ա-Ջ-Ն 43

1 Քրիստոսի մկրտութիւնը. փորձութիւնը. քարոզը. առաքելոց կոչուիլը. և հիւանդներ բժշկելը . . 45
2 Անդամալոյծը. Մատթէոսի կոչուիլը. Քրիստոսի պատասխանը, պահք և շաբաթ չը պահելու մասին . 46
3 Չորացած ձեռքը, տասն երկու աշակերտները. կարգացողների հայհոյութիւնը. Քրիստոսի եղբայր քոյր և մայրը . . . 47
4 Քրիստոսի ասած այլ և այլ առակները և ծովի մրրիկը . . . 48
5 Քրիստոսի բժշկութիւնները . 49
6 Քրիստոսի անարդուիլը. առաքելոց ու-

զարկելը. Յովհաննէսի գլխատուիլը. ժողովրդեան կերակրելը. և ծովի վրայ մանելը 49
7 Քրիստոսի փարիսեցւոց կեղծաւորութիւնը նախատելը . . 51
8 Քրիստոսի եօթը հացով գործած հրաշքը. կոյրերին բժշկուիլը. չարչարանաց և յարութեան գուշակութիւնը. 52
9 Քրիստոսի պայծառակերպութիւնը. լուսնոտը. խոնարհութեան և գայթակղութեան մասին խօսք . . 53
10 Քրիստոսի վճռական խօսքը կին արձակելու մասին. մանուկներ օրհնելը. և այլ պատուէրները . . 55
11 Քրիստոսի Երուսաղէմ մտնելը. թզենու անէծքը. և տաճարի մաքրելը. 56
12 Չար մշակները. կայսեր հարկ տալը. մեծ պատուիրանքը. Քրիստոս ո՞ւմ որդի լինելը. . . . 57
13 Քրիստոսի գուշակութիւնը. . 58
14 Քրիստոսի օծումը. հաղորդութիւնը. պարտիզի աղօթքը. մատնուիլը. և Պետրոսի իւր տէրն ուրանալը . 26

15 Քրիստոսի չարչարանքը. փշեղէն պըսակը. խաչելութիւնը. մահը և թաղումը 61
16 Քրիստոսի յարութիւնը և համբարձումը 63

Բ-ԳԼԽ-ՈՒՆ Ղ-ԻՆ ԱՐՔՈՆԷ 65

1 Յովհաննէսի և Քրիստոսի ծննդեան աւետիքը. Ս. Մարիամ կոյսի եղիսաբեթի մօտ գալը և Յովհաննէսի ծնունդը. 67
2 Քրիստոսի ծնունդը. անուանակոչութիւնը. Տեառնընդառաջը. և տասն երկու տարեկան ժամանակ տաճար գալը 70
3 Յովհաննէսի քարոզը. Քրիստոսի համար վկայութիւնը. և մկրտութիւնը. 74
4 Քրիստոսի փորձութիւնը և քարոզը. դիւահարին. Պետրոսի զոքանչին. և ուրիշ հիւանդներ բժշկելը. . 76
5 Պետրոսի ձուկ բռնելը. Քրիստոսի բժըշկութիւնները. Մատթէոսի կանչուիլը. Առաքելոց պահք չպահելը. . 77
6 Քրիստոսի շաբաթ օրուայ գործքերը և խրատները. առաքելոց կանչելը. 79

7 Քրիստոսի Հարիւրապետի սպասաւորին բժշկելը. Նային քաղաքի որբ և այրի կնոջ որդին կենդանացնելը. և մեղաւոր կնոջից օծուիլը. . . 80
8 Քրիստոսի հետևող կանայքը Ստուծոյ խօսքի սերմերը. Նրա ազգականները. ծովը դադարացնելը և բժշկութիւնները. 82
9 Քրիստոսի տասներկու առաքեալները. Հերովդէսը. Հինգ հազար մարդկանց կերակրելը. Նրա շարշարանքը և հետևողների խաչը. կերպարանափոխ լինելը. աշակերտաց փառասիրութիւնը և նախանձը. 83
10 Քրիստոսի եօթանասուն երկու աշակերտները. ողորմած սամարացին. Մարիամ և Մարթան. . . . 85
11 Քրիստոսի իւր աշակերտաց աղօթք անել սովորեցնելը. գև հանելու մասին պատասխանելը. օրէնսգէտներին յանդիմանութիւն տալը. և վայ կորդալը նրանց վրայ. . . . 87
12 Քրիստոսի իւր աշակերտացը պատուէր-

ներ տալը 88
13 Քրիստոսի ապաշխարութիւն քարոզելը և այլ պատուէրները . . . 90
14 Քրիստոսի հիւր գնալը . ընթրեաց առակը . իրան հետևողների անձնուրացութիւնը 91
15 Քրիստոսի պատմած կորած ոչխարն ու դրամը և անառակ որդին . 93
16 Անիրաւ տնտեսի . մեծատան և Ղազարոսի առակը . . . 97
17 Քրիստոսի յորդորը . դայթակղութեան . ներողամտութեան . հաւատքի և Աստուծոյ արքայութեան մասին . 101
18 Քրիստոսի պատմելը անիրաւ դատաւորի փարիսեցու և մաքսաւորի առակը և հարստութեան վտանգը . . 102
19 Քրիստոսի խրատը . Զակէոսը . տան մնասի առակը . Երուսաղէմ մտնելը . և տաճարը մաքրելը . . 103
20 Քրիստոսի իշխանութիւնը . այգւոյ առակը . կայսեր հարկ տալը . մեռելոց յարութիւնը . դաւթի որդի կոչուիլը . գպիրներից զգուշանալու պատուերը . 104
21 Քրիստոսի գովելը գանձանակում եր-

կու լուսայ ձգող որբ և այրի կնոջը. և նախաձայնելը Երուսաղէմի կործանումը և տիրոջ գալուստը. . . 105
22 Քրիստոսի մատնիչը. պասէքն ու ընթրիքը. շաբշաբանքը աշակերտաց փառասիրութիւնը. Պետրոսի ուրանալը. 107
23 Քրիստոսի շաբշաբանքը Պիղատոսի և Հերովդէսի մօտ. խաչուիլը. մահն ու թաղումը 109
24 Քրիստոսի յարութիւնը. երևալը և համբարձումը . . . 110

Բ-ԼԱՆԳ-Ի-Ն ՅՈՎՀԱՆՆԷՍ ԱՎԵՏԱՐԱՆԻ 112

1 Մարմնացեալ բանը. Յովհաննէս-Մկրտիչը. Յիսուսի առաջին աշակերտները 113
2 Քրիստոսի ջուրը գինի փոխելը. և տաճարը մաքրելը . . . 116
3 Քրիստոսի խօսակցութիւնը Նիկոդէմոսի հետ Յովհաննէս-Մկրտիչի վկայութիւնը Յիսուսի համար . . 117
4 Սամարացի կինը. թագաւորական որդւոյ բժշկուիլը . . . 120
5 Քրիստոսի բնիհնգդա աւազանի մօտ

Հիւանդին բժշկելը. և իւր Աստուածութիւնը վկայելը . . 122
6 Քրիստոսի հինգ հաղար մարդկանց կերակրելը. և ծովի վրայ դնալը և քարոզելը 124
7 Քրիստոսի եղբայրների անհաւատութիւնը. նրա քարոզը. ժողովրդեան գաղափարը. և Նիկոդէմոսի պաշտպանելը 128
8 Քրիստոսի վճիռը շնացող կնոջ մասին. վիճաբանութիւն նրա անձի և պաշտօնի մասին. անարատութիւնը և Աստուածութիւնը . . . 129
9 Քրիստոսի 'ի ծնէ կոյրին բժշկելը. 130
10 Քրիստոսի յայտնած բարի հովիւը. նրա ոչխարները և մնացեալն . . 132
11 Քրիստոսի յարութիւն տալը Ղազարոսին 133
12 Քրիստոսի օծուիլը Ղազարոսի քոյր Մարիամից։ Երուսաղէմ մտնելը. նրա մահուան պատուղը. երկնքից եկած ձայնը. հրէից անհաւատութիւնը . 134
13 Քրիստոսի իւր աշակերտաց ոտքերը լուանալը. մատնչի ով լինելը յայտնելը.

փառաւորուիլը և Պետրոսի ուրացութիւնը 137
14 Քրիստոսի վերջին խօսքերը իւր աշակերտաց հետ և Ս. Հոգւոյ խոստումը. 138
15 Քրիստոսի սէրը. և աշխարհի ատելութիւնը 139
16 Քրիստոսի մխիթարութիւնը. Ս. Հոգւոյ պաշտօնը. և տրտմութիւնից յետոյ ուրախութիւն . . . 140
17 Քրիստոսի աղօթքը . . 141
18 Քրիստոսի բռնուիլը պարտիզում. հարցաքննուիլը քահանայապետից. և Պիղատոսի առաջ և Պետրոսի ուրանալը 142
19 Քրիստոսի ծեծուիլը փշէ պսակը խաչուիլը. մահը և թաղումը . 144
20 Քրիստոսի յարութիւնը և Հրէաստանում յայտնուիլը . . 146
21 Քրիստոսի յայտնուիլը Գալիլեայում Տիբերիայի ծովի մօտ. նրա մարգարէութիւնը Պետրոսի և Յովհաննէսի մասին 148

Վերջաբան . . . 151

ՎՐԻՊԱԿ

Երես		տող	Սխալ	Ուղիղ
12	վերից	8	մաքսաւորներ	մաքսաւորների
15	վերից	2	Լողարկեց	ուղարկեց
17	վերից	5	արքայութեան	արքայութեան
26	վերից	2	օրհնելը	օրհնելը
27	վերից	6	քրիստոսի	քրիստոսի
29	վերից	1	առ տուր	առ ու տուր
36	վերից	3	արիուն	արիւն
41	վերից	4	պատուրեց	պատուիրեց
52	վերից	4	վե առնելու	վերառնելու
53	վերից	3	աւետարանի	աւետարանի
61	վերից	5	յանձեց	յանձնեց
62	վերից	3	պատուվ	պատուով
64	վերից	5	կրդեն	կ դնեն
66	վերից	7	դինուրդների	դինուորների
88	վերից	1	է	էլ
93	վերից	8	գտենլու	գտնելու

ՀԱՅԱ ԳԻՏ.
ՀԱՅԱՍՏԱՆԻ
ԳՐԱԴԱՐԱՆ
ԱԿԱԴԵՄԻԱ